

ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՄ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 81՝1(075.8)

ԳՄԴ 81.0g73

Ղ 158

Գիրքը հրապարակության է երաշխավորվել Արցախի պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդների որոշումներով:

Խմբագիր՝ Լ. Մարգարյան

Ընդհանուր լեզվաբանություն. գործնական աշխատանքների
Ղ 158 ձեռնարկ ուսանողների համար: 2-րդ հրատ.: Հասմիկ Ղազարյան: Երևան 2025, 191 էջ:

Սույն ձեռնարկը գրված է ընդհանուր լեզվաբանության բուհական ծրագրի հիման վրա:

Այն ուղղված է ուսանողների ինքնուրույն աշխատանքը նպատակամղելու անցնելիք տեսական նյութի յուրացմանն ու խորացմանը, ինչպես նաև նրանց գործնական հմտությունների զարգացմանը: Այդ առումով ձեռնարկը պարունակում է լեզվաբանության բոլոր բաժիններին վերաբերող տարաբնույթ հարցեր ու առաջադրանքներ:

ՀՏԴ 81՝1(075.8)

ԳՄԴ 81.0g73

ISBN 978-9939-970-16-5

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2025

Լեզվաբանության պատմություն

Ինքնաստուգման հարցեր

1. Ե՞րբ է ձևավորվել լեզվաբանությունը որպես ուսմունք և ե՞րբ՝ որպես ինքնուրույն գիտություն:
2. Որո՞նք են լեզվաբանության պատմության շրջանները:
3. Ինչպե՞ս է կոչվում լեզվաբանության ձևավորման առաջին շրջանը, որո՞նք են նրա զարգացման ենթաշրջանները:
4. Ի՞նչ շրջանակներ էին ընդգրկում լեզվաբանական հետազոտությունները հին դարերում, միջին դարերում, վերածնության դարաշրջանում:
5. Ինչպե՞ս է կոչվում լեզվաբանության ձևավորման երկրորդ շրջանը. լեզվաբանական ի՞նչ ուղղություններ ձևավորվեցին այս շրջանում:
6. Ի՞նչ է ուսումնասիրում պատմահամեմատական լեզվաբանությունը:
7. Ինչպե՞ս են բնութագրում լեզուն բիոլոգիական ուղղության ներկայացուցիչները:
8. Ինչպե՞ս են բնութագրում լեզուն հոգեբանական ուղղության ներկայացուցիչները:
9. Ինչպե՞ս են բնութագրում լեզուն երիտքերականական ուղղության ներկայացուցիչները:
10. Ինչպե՞ս է կոչվում լեզվաբանության ձևավորման երրորդ շրջանը. լեզվաբանական ի՞նչ ուղղություններ են ձևավորվել այս շրջանում:
11. Ինչպե՞ս են բնութագրում լեզուն հասարակագիտական ուղղության ներկայացուցիչները:
12. Ինչպե՞ս են բնութագրում լեզուն կառուցվածքաբանական տարբեր ուղղությունների ներկայացուցիչները:

13. Լեզվաբանական ինչպիսի՞ նորագույն ուղղություններ կան:
14. Ի՞նչ է ուսումնասիրում հաղորդակցական լեզվաբանությունը:
15. Ի՞նչ երևույթ է լեզվական հաղորդակցումը:
16. Ինչպե՞ս է կատարվում տեղեկատվական հաղորդակցումը:
17. Ի՞նչ է կարգավորող հաղորդակցումը:
18. Ինչպե՞ս է կատարվում արտալեզվական հաղորդակցումը:
19. Ի՞նչ յուրահատկություն ունի էլեկտրոնային հաղորդակցումը:
20. Ի՞նչ յուրահատկություն ունի միջմշակութային հաղորդակցումը:
21. Ի՞նչ է ուսումնասիրում ճանաչողական լեզվաբանությունը:
22. Ո՞րն է լեզվի ճանաչողական գործառույթը:
23. Ի՞նչ է ներառում կոնցեպտուալ կադապարը:
24. Ի՞նչ է ներառում ճանաչողական կադապարը:
25. Ինչո՞վ են ընդհանուր կոնսպեկտը և հասկացությունը:
26. Ի՞նչ յուրահատկություն ունի գեղարվեստական կոնցեպտը:
27. Ո՞րն է աշխարհի լեզվական քարտեզի էությունը:
28. Լեզվական քարտեզի ուսումնասիրության ի՞նչ ուղղություններ կան:
29. Ի՞նչ է ուսումնասիրում համակարգչային լեզվաբանությունը:
30. Ինչպե՞ս է կատարվում հաղորդակցման կադապարավորումը:
31. Ի՞նչ տեսակների են լինում համակարգչային բառարանները:
32. Ինչպե՞ս է իրականանում հեռավար ուսուցումը:
33. Ի՞նչ է հիպերտեքստը և ի՞նչ հատկանիշներ ունի:

Լեզվաբանությունը գիտությունների համակարգում

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն է լեզվաբանության առարկան:
2. Ի՞նչ խնդիրներ ունի լեզվաբանությունը:
3. Ինչպե՞ս է արտահայտվում լեզվաբանության և հասարակական գիտությունների կապը:
4. Ինչպե՞ս է արտահայտվում լեզվաբանության և բանասիրության կապը:
5. Ինչպե՞ս է արտահայտվում լեզվաբանության և մատենագիտության կապը:
6. Ինչպե՞ս է արտահայտվում լեզվաբանության և պատմական գիտությունների կապը:
7. Ինչպե՞ս է արտահայտվում լեզվաբանության և աշխարհագրության կապը:
8. Ինչպե՞ս է արտահայտվում լեզվաբանության և հարալեզվաբանական բնագավառների կապը:
9. Ի՞նչ են ուսումնասիրում բնական գիտությունները:
10. Ո՞րն է հոգելեզվաբանության առարկան:
11. Ո՞րն է հանրալեզվաբանության առարկան:
12. Ո՞րն է նյարդալեզվաբանության առարկան:
13. Ո՞րն է կիրառական լեզվաբանության առարկան:
14. Ի՞նչ է ուսումնասիրում լեզվափիլիսոփայությունը:
15. Ի՞նչ է ուսումնասիրում լեզվանշանագիտությունը:

Լեզվի բնութագրերը: Լեզվի բնորոշումը:

Լեզու և մտածողություն

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչու՞ է լեզուն համարվում հասարակական երևույթ:
2. Ինչպիսի՞ հաղորդակցման միջոց է լեզուն:
3. Ի՞նչ հատկանիշներ ունի լեզվական կառուցվածքը:
4. Ինչպիսի՞ հարաբերության մեջ են լեզվի կառուցվածքի բաղադրիչները և ի՞նչ գործառույթ են կատարում:
5. Ինչու՞ է լեզուն համարվում կառուցվածքային համակարգ:
6. Լեզուն՝ որպես համակարգ, ինչպիսի՞ միավորների բազմություն է. քանի՞ տեսակ են լինում բազմությունները:
7. Ի՞նչ է հակահամակարգը, և ինչպիսի՞ն կարող է լինել այն:
8. Ինչպիսի՞ն է լեզվի և մտածողության կապը:
9. Ի՞նչ դեր ունի մտածողությունը խոսք կառուցելու գործում:
10. Ինչպիսի՞ն է լեզվի և գիտակցության կապը:
11. Ի՞նչ է տեղեկույթի վերամշակումը:
12. Ինչպե՞ս են ընտրվում լեզվական միավորները:
13. Ինչպե՞ս են ընտրվում քերականական նշանակությունները:

Գործնական առաջադրանքներ

1. Ներկայացնել հնչույթային համակարգի ենթահամակարգերը և ցույց տալ, թե ինչպիսի բազմություններ են դրանք կազմում:
2. Ներկայացնել ձևույթային համակարգի ենթահամակարգերը և ցույց տալ, թե ինչպիսի բազմություններ են դրանք կազմում:
3. Ներկայացնել բառային համակարգի ենթահամակարգերը և ցույց տալ, թե ինչպիսի բազմություններ են դրանք կազմում:
4. Ներկայացնել ձևաբանական համակարգի ենթահամակարգերը և ցույց տալ, թե ինչպիսի բազմություններ են դրանք կազմում:

5. Ներկայացնել շարահյուսական համակարգի ենթահամակարգերը և ցույց տալ, թե ինչպիսի բազմություններ են դրանք կազմում:

6. Կողք կողքի ներկայացնել համակարգային և հակահամակարգային ձևեր՝

ա. որոնք հաստատված են լեզվական նորմով,

բ. որոնք հաստատված չեն լեզվական նորմով:

Լեզուների տիպերն ըստ գործածության

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞ր լեզուներն են համարվում կենդանի լեզուներ:
2. Ո՞ր լեզուներն են համարվում մեռած լեզուներ:
3. Ո՞ր լեզուներն են հարաբերականորեն մեռած լեզուներ:
4. Ի՞նչ դեր ունեն ազգամիջյան լեզուները:
5. Ի՞նչ դեր ունեն միջազգային լեզուները:
6. Ինչպիսի՞ արհեստական լեզուներ կան:

Գործնական առաջադրանքներ

1. Խմբավորել հետևյալ լեզուները կամ լեզվախմբերը՝ ըստ կենդանի կամ մեռած լինելու հատկանիշի:

Ասորերեն, անգլերեն, ասուրերեն, աբխազերեն, արևելյան իրանական լեզուներ, արևելյան արամեական լեզուներ, արևելյան սլավոնական լեզուներ, արևմտյան գերմանական լեզուներ, աքքադերեն, քալդիական լեզուներ, քանտու լեզուներ, գալլերեն, գերմանական լեզուներ, գոթերեն, եբրայերեն, լատիներեն, էստոներեն, թաթարերեն, թուխարական լեզուներ, լեհերեն, լիտվաներեն, խեթերեն, խորվաթերեն, թյուրքական լեզուներ, թուրքմեններեն, իբերո-կովկասյան լեզուներ, իռլանդերեն, իսպաներեն, իտալերեն, վրացերեն, ամերիկյան լեզուներ, հյուսիսային սեմական լեզուներ, հնդիրանական լեզուներ, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պարսկերեն, ռոմանական լեզուներ, ռուսերեն, տիբեթերեն, ուկրաիներեն, ուզբեկերեն, փյունիկերեն, ֆիններեն, ֆրանսերեն, հայերեն:

Լեզվի գոյության ձևերը: Լեզվի տարբերակները:

Լեզու, խոսք, նորմ, կառուցվածք

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են լեզվի գոյության հնչյունային և գրային ձևերը:
2. Ի՞նչ առավելություն ունի հնչյունային լեզուն գրային լեզվի նկատմամբ և հակառակը:
3. Ինչո՞ւ է տարբերվում գրային լեզվի տարբեր տեսակները:
4. Ի՞նչ է լեզվական տարբերակը:
5. Որո՞նք են լեզվի տարբերակային ձևերը և ի՞նչ կարգերի մեջ են խմբավորվում:
6. Որո՞նք են լեզվի տարածական տարբերակները և ինչո՞ւ են հասկանալի:
7. Ի՞նչ հատկանիշներ ունի բարբառը:
8. Որո՞նք են լեզվի հասարակական տարբերակները և ու՞մ են ծառայում:
9. Որո՞նք են լեզվի գործառական տարբերակները:
10. Ինչո՞ւ են բնութագրվում խոսակցական և գրական տարբերակները:
11. Որո՞նք են գիտական ոճի յուրահատկությունները:
12. Որո՞նք են պաշտոնական ոճի յուրահատկությունները:
13. Որո՞նք են առօրյա-խոսակցական ոճի յուրահատկությունները:
14. Որո՞նք են հրապարակախոսական ոճի յուրահատկությունները:
15. Որո՞նք են գեղարվեստական ոճի յուրահատկությունները:
16. Ի՞նչ է լեզուն:
17. Ի՞նչ է խոսքը:
18. Ի՞նչ է նորմը:

19. Ի՞նչ է կառուցվածքը:

20. Ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում խոսքի, նորմի և կառուցվածքի մակարդակները:

21. Ինչո՞ւ վ է պայմանավորված լեզվական նորմի փոփոխությունը:

Գործնական առաջադրանքներ

1. Բերել լեզուների տարածական տարբերակները ներկայացնող առանձին հատվածներ, ցույց տալ այլ տարբերակների հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները:

2. Բերել լեզուների հասարակական և գործառական տարբերակները ներկայացնող առանձին հատվածներ, ցույց տալ այլ տարբերակների հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները:

3. Բերել լեզուների գործառական տարբերակները ներկայացնող առանձին հատվածներ և ներկայացնել դրանց հնչյունական, բառային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները:

4. Բերել գեղարվեստական խոսքի մեկ հատված և ցույց տալ այն անհատականը, որով տարբերվում է այն մյուս խոսքերից:

5. Հայերենի ձևաբանական կարգերը ներկայացնել նորմի և կառուցվածքի մակարդակներում:

6. Ռուսերենի ձևաբանական կարգերը ներկայացնել նորմի և կառուցվածքի մակարդակներում:

7. Անգլերենի ձևաբանական կարգերը ներկայացնել նորմի և կառուցվածքի մակարդակներում:

8. Կազմել հետևյալ բառերի հոգնակի ձևերը, բացատրել կազմության օրինաչափությունները և դրանցից կատարված շեղումները:

1.

- ջուր, գույն, տուն, լուր, սար, ձոր, գիրք, գիծ, թիվ, բու, գունդ, տառ, լու, շուն
- մուկ, ձուկ, դուռ, գառ, ակ, եգ, լեռ, հարս, մատ, նուռ, բեռ, ծունկ
- սեղան, ծաղիկ, ճառագայթ, առյուծ, հնչյուն, ձևույթ, մոլորակ, անձրև
- բժիշկ, գրող, դպրոց, սրբիչ, ժպիտ, խրճիթ, կղզի, շրջան, վրձին, վրան
- ազդր, արկղ, դուստր, եզր, սանր, կայսր, ոսկոր, վագր, տետր, գամփռ
- անձրևաջուր, աստղափուշ, անտառամուկ, դպրատուն, արևելահայ, բանաձև
- բանասեր, գեղագետ, գնդացի, հրացան, հրթիռ, հրշեջ, ջրմուղ, փայտահատ, մեծատուն, վաչկատուն
- մարդ, նախամարդ, տղամարդ
- կին, պարոն, տիկին, անձ, հարս, ող, ռունգ, ակ

2.

- стол, автобус, нож, ключ, словарь, шкаф, туча, лужа, книга, рука, нога, марка, лавка;
- день, сон, отец, огурец, пенъ, огонь, уголь, камень, лев, лоб, рот, угол, потолок;
- стул, лист, брат, ручей, воробей, звено, крыло, перо, колесо, муравей, соловей, семья, судья;
- дом, окно, облако, письмо, кресло, место, слово, яйцо, число, адрес, глаз, город, остров

3.

- stomach, horse, lamp, monarch, desk, cap, house, boy, plant, student, month

- lady, dress, tomato, country, fox, bush, piano, bench, quiz, family, class, photo
- half, knife, life, wife, safe, roof, wolf, handkerchief, thief, self, gulf, cliff
- man, woman, foot, mouse, gentleman, child, goose, louse, brother, ox, tooth
- sheep, deer, fish, fruit, swine, trout, means, species, salmon, carp, series
- public, people, police, cattle, firm, staff, nation, government, team, clergy
- memorandum, datum, bacterium, medium, formula, analysis, cactus, crisis
- advice, beauty, grammar, cheese, furniture, information, colour, room, work

9. Բառաշարքից առանձնացնել այն բառերը, որոնց հոգնակին ժամանակակից գրական հայերենում, ռուսերենում և անգլերենում կազմվում է՝

1. կանոնավոր և անկանոն զուգահեռ տարբերակներով,

2. միայն անկանոն տարբերակով:

1. Պատանի, որբ, աթոռ, տիկին, մարդ, որդի, մուկ, երկրաշարժ, էշ, հորթ, անձ, ծեր, կղզի, պարոն, գիրք, գունդ, աղավնի, թիթեռ, տղամարդ, կին, գամփռ, նահանգապետ, խորհրդանիշ, ժամացույց, նամականիշ, թիզ, հատոր, ձուկ, աղջիկ, ցուլ, անձ, առու, դուռ, հոգի, հյուղ, արտույտ, քավորակին, ծով, անգղ:

2. Год, картина, цех, село, флюгер, дом, тон, арбуз, армия, пропуск, зуб, горошек, город, лист, сын, муж, орден, забор, директор, игра, шофер, ребенок, мастер, манера, муза, мята, надежда, человек, образ, округ, парус, печка, приписка, разница, реакция, рекорд, роза, дно.

3.Scarf, agent, schoolboy, wharf, people, advice, hoof,weather,idea, relative, daughter, journey, nurse, handkerchief, musician,paper, dwarf, star, city, mountain, fish, holiday, fruit, cinema, formula, street, lfe, antenna, language, datum, information, figure, bacterium, morning, shelf, chapter.

10.Տեքստից դուրս գրել ժամանակակից գրական հայերենի համակարգային և ոչ համակարգային հոգնակերտներով կազմված բառերը և խմբավորել ըստ կիրառական-ոճական յուրահատկությունների:

Դիմելով հանրությանը՝ բանախոսն ասաց. «Տիկնա՛յք և պարոնա՛յք, հին հույները հսկայական դեր են խաղացել եվրոպական քաղաքակրթության ստեղծման և զարգացման գործում: Հիշենք միայն ամենակարևոր ներդրումները: Հույները փյունիկեցիներից վերցրին նրանց գիրը և այնպես կատարելագործեցին այն, որ հունական այբուբենը դարձավ եվրոպական բոլոր ժողովուրդների գրերի հիմքը: Հույները ստեղծեցին գրավիչ դիցաբանություն և բարձր արվեստ, որը ոգեշնչող ազդեցություն ունեցավ հատկապես Վերածնության դարաշրջանի արվեստագետների, բանաստեղծների և ճարտարապետների վրա: Հույները ստեղծեցին անասելի հմայքով, կատարյալ ներդաշնակությամբ, վեհությամբ գերող բարձրաքանդակներ, արձաններ ու քանդակախմբեր: Այդպիսիք են, օրինակ, Ֆիդասի գլուխգործոցները: Հույները տրամաբանական մտածողության նախաձեռնողներն էին, փիլիսոփայության հիմնադիրները, մի գիտություն, որից հետզհետե անջատվեցին ուրիշ գիտաճյուղեր: Հունական հասարակության մեջ են ծնվել այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Պլատոնը, Արիստոտելը, Դեմոկրիտը, Էպիկուրը և այլք: Հույները մարմնի և հոգու, ձևի և բովանդակության, գեղեցկության և բարության ներդաշնակությունն էին դավանում:

Նրանց մեջ հայտնի էին առանձնապես սպարտացիները՝ իրենց ժուժկալ և պարզ ապրելակերպով: Նրանք ուտում էին հասարակ շիլա ու բլիթ, պանիր, կանաչեղեն, բակլա, ձուկ: Հազվադեպ նաև միս էին ուտում, իսկ գինին գրեթե միշտ ջրով բացած էին խմում: Հույներն էին Օլիմպոսում կազմակերպվող մարզական համերկ-րային խաղերի նախաձեռնողները: Մեր ժամանակներում այդ ավանդական մրցույթներն իրենց նոր կյանքը գտան աշխարհի խաղաղասեր ժողովուրդների օլիմպիական խաղերի մեջ: Հին հունական աշխարհի ծաղկումը համեմատաբար կարճ տևեց՝ ընդամենը մի քանի դար, սակայն նրա մշակույթի ճառագայթման տևողությունը մարդիկ կարող են հազարամյակներով չափել»:

11. Բացատրել, թե ժամանակակից գրական հայերենի և անգլերենի նորմը նշված բայերի քերականական որ իմաստներն է իրացնում ոչ համակարգային ձևերով:

1.Գալ, լալ, տալ , ասել, զարկել, բերել, ուտել, դառնալ, վեր կենալ, անել, դնել, տանել, առնել, ելնել, թողնել, տեսնել, լինել, եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժել, կենալ/մնալ/, կենալ/ապրել:

2.Arise, become, bend, eat, forbid, freeze, catch, dig, forego, hide, mistake, shave, dream, swear, know, fight, breed, choose, let, lie, hold, read, mean, put, seek, overdo, keep, pay, ride, wake, throw, think, write.

12.Բերել՝

1.գոյականներ,

ա/ որոնց հոգնակին չի իրացվում նորմի մակարդակում,

բ/ որոնց հոլովման հարացույցի որևէ ձև չի իրացվում նորմի մակարդակում կամ իրացվում է միայն հոգնակիում,

գ/որոնց որոշյալությունը չի իրացվում նորմի մակարդակում,

2.բայեր,

դ/որոնց դերբայական հարացույցի որոշ ձևեր չեն իրացվում նորմի մակարդակում,

ե/որոնց խոնարհման հարացույցի որոշ ձևեր չեն իրացվում նորմի մակարդակում:

13. Առանձնացնել այն բառերը, որոնց համակարգային ձևերն իրացնելիս նորմը ստեղծում է զուգահեռ ձևեր:

ա/Հայելի, անձ, ուխտատեղի, աղջիկ, հույս, ժամ, զարդատուփ, ես, կաշի, երկուշաբթի, մահ, դար, կենտրոն, Մոչի, սոճի, Անի, ավերում, միտում, դիմում, կայսր, խնդիր, դուռ, անկյուն, ձյուն, դուստր, ազգ, Աստված, հունվար, քաղաքացի, վերաբերմունք, ձեռնարկություն, քաջություն, հույս, մամուլ, սեր, կարոտ, ծաղկունք, սուգ, լույս, հանգստություն, մանուկ, պատիվ, հանգիստ, հայտարարություն, ամուսին, արքայազն, ընկեր, օր:

բ/Ես, ոչ ոք, մենք, սա, որևէ, ով, ամեն, դու, դուք, նա, այնտեղ, ամեն մեկը, այսպիսի, այդպիսի, այսպես, նույնպես:

գ/Բերել, բարձրանալ, ասել, նկարել, ցատկոտել, դնել, ուտել, մտածել, պատվիրել, բացել, տալ, ցանկանալ, ծնվել, վազել, գալ, թողնել, նկատել, հիմնավորել, ցուցադրել, վերադառնալ, ուտել:

14. Տեքստից դուրս գրել այն գոյականները, որոնք հարացուցային ոչ մի ձևում հոդ չեն ստանում:

Գոյականները, ըստ թվի հատկանիշի, ժամանակակից հայերենում տարբեր են: Նրանց մեծ մասը ունի և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ: Մի շարք գոյականներ, պայմանավորված այլևայլ հանգամանքներով, հոգնակի չեն ունենում, ընդ որում անհոգնական գոյականների մեջ էլ կան տարբերություններ: Օրինակ՝ *դեղորայք, սպիտակեղեն, դարվինիզմ, հեր, նախնադար* և

այլ գոյականներ ընդհանրապես հոգնակի չեն կարող կազմել, մինչդեռ *զինի, կաթ, վիշտ, ուրախություն, Արամ, աստված* և այլ գոյականներ որոշ դեպքերում կարող են հոգնակի ունենալ: *Գրիգորենք, պապոնք, հերանք, Վեդունք* և այլ նման բառեր, ըստ թվային առանձնահատկության, միատեսակ չեն ընկալվում. ոմանք դրանք համարում են անեզական: Կա նաև կարծիք, որ այդ բառերը համապատասխան եզակիների հոգնակի ձևեր են: Տարբեր է նաև հոգնակի կազմող մասնիկերի տարածվածությունը: Այսպես՝ *-իկ* մասնիկ ստանում է միայն մարդ բառը՝ *մարդիկ*, նաև այն բառերը, որոնց համար *մարդ* բառը վերջնաբաղադրիչ է՝ *տղամարդիկ, նախամարդիկ* և այլն, *-այք* ստանում է միայն *կին* բառը՝ *կանայք*, մյուս բոլոր բառերի հոգնակին կազմվում է *-եր* կամ *-ներ* մասնիկներով:

15.Ներկայացնել միևնույն գոյականի ու դերանվան հոլովման և բայի խոնարհման հարացույցը հայերենի զարգացման տարբեր շրջաններում՝ ցույց տալով նորմի փոփոխությունը և նրա պատճառները:

Լեզվաբանական մեթոդներ Ինքնաստուգման հարցեր

1. Լեզվաբանական ինչպիսի՞ հայեցակետեր և նրանց վրա հիմնված ինչպիսի՞ ուղղություններ կան:

2. Ո՞րն է պատմահամեմատական մեթոդի նպատակը:

3. Ի՞նչ տեսական և գործնական սկզբունքներ ունի պատմահամեմատական մեթոդը:

4. Ինչպիսի՞ն կարող են լինել լեզվական ընդհանրությունները, և ինչո՞վ են դրանք տարբերվում իրարից:

5. Ո՞րն է արտաքին և ներքին վերականգնումների մեթոդի նպատակը:

6. Ի՞նչ է հետապնդում ընդհանուր համեմատությունների մեթոդը:

7. Ո՞րն է լեզվաժամանակագրության մեթոդի նպատակը:

8. Ժամանակագրավորման քանի՞ եղանակ կա:

9. Ո՞րն է համաժամանակավորման մեթոդի նպատակը:

10. Ո՞րն է զուգադրական մեթոդի նպատակը:

11. Որո՞նք են զուգադրական մեթոդի եղանակները:

12. Ի՞նչ է ուսումնասիրում լեզվաբանական աշխարհագրություն մեթոդը:

13. Ո՞րն է փոխկադապարման մեթոդի էությունը:

14. Ո՞րն է կառուցվածքային կամ նկարագրական մեթոդի էությունը:

Գործնական առաջադրանքներ

1. Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից գրական հայերենի հնչյունական

համակարգերը, ցույց տալ ընդհանրություններն ու այն հիմնական փոփոխությունները, որոնց ենթարկվել են դրանք լեզվի պատմական զարգացման ընթացքում:

2.Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել թվի քերականական կարգը հայերենում:

3.Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել հոլովի քերականական կարգը հայերենում:

4.Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել եղանակի քերականական կարգը հայերենում:

5.Զուգադրական մեթոդով ուսումնասիրել ժամանակակից հայերենի, ռուսերենի և անգլերենի հնչյունական համակարգերը և ցույց տալ նրանց համակարգային տարբերությունները:

6.Զուգադրական մեթոդով ուսումնասիրել բայասեռի դրսևորումները հայերենում, ռուսերենում և անգլերենում:

7.Զուգադրական մեթոդով ուսումնասիրել թվի քերականական կարգի դրսևորումը ժամանակակից հայերենում, անգլերենում և ռուսերենում:

8.Զուգադրական մեթոդով ուսումնասիրել հոլովի քերականական կարգը ժամանակակից հայերենում, անգլերենում և ռուսերենում:

9.Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել թվական խոսքի մասը հայերենում:

10.Զուգադրական մեթոդով ուսումնասիրել թվական խոսքի մասը ժամանակակից հայերենում, ռուսերենում և անգլերենում:

11.Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել ածական խոսքի մասը հայերենում:

12.Զուգադրական մեթոդով ուսումնասիրել ածական խոսքի մասը ժամանակակից հայերենում, ռուսերենում և անգլերենում:

13. Պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրել անձնական և ցուցական դերանունները հայերենում:

14. Զուգադրական մեթոդով ուսումնասիրել անձնական դերանունները ժամանակակից հայերենում, ռուսերենում և անգլերենում:

15. Կազմել հետևյալ բառերի հոգնակիները գրաբարում և ժամանակակից հայերենում: Կատարել համեմատություն, ցույց տալ թվակարգի հետ կապված համակարգային յուրահատկությունները լեզվի երկու շրջաններում:

Լեռ, մատանի, դուստր, անկյուն, անձ, մաս(ն), աղջիկ, ձուկ(ն), նամակ, մարմին, աղեղ(ն), անուն, փեսա(յ), գյուղ ամուսին, ճրագ, տարի, կայսր, սերմ(ն):

16. Հոլովել անձնական դերանունները հայերենի զարգացման երեք շրջաններում: Կատարելով համեմատություն՝ ցույց տալ զարգացման ընթացքը:

17. Կիրառելով ներքին վերականգնումների մեթոդը՝ որոշել ընդգծված արմատների ավելի հին ձևերը:

Գլուխկոտրուկ, ձեռք, դոնապան, դրժել, անմիջապես, դնել, կռապաշտ, լցնել, կծվահամ, հնոցապան, չարաճճի, մահճակալ, կտրիչ, լսարան, կայրապատ:

10. Տրված տեքստերի սահմաններում ցույց տալ Ղարաբաղի բարբառի ու ժամանակակից գրական արևելահայերենի միջև առկա հնչյունաքերականական ու բառային զուգաբանությունների նմանություններն ու տարբերությունները:

1. Պլըպուդուն աշկը էն ա ինում Մելիք-Շահնազարեն դղանեն:

Մին կիրեկի օր ծեն ա տամ, դղանը յոր օնում, վեր մաչին փլավ իփի: Պիրում ա էրկու օր պահում, մի պիծի դղան էլ նհետը տանում տամ Մելիք-Շահնազարեն:

-Պու'ղի, էս պիծինը հինչ ա՞:

-Մելիք, պա ասել չըս, դղանը ծնալ ա:

Մելիքը սուս ա անում, ճոխտ դղանը յոր օնում: Մին շեքթանը ետը համին դղանը Պուդին մին էլ ա օգում:

Մելիքը մտածում ա. «Դղանը տամ, բալի մինն էլ ա ծննական»:

Մին ամես անց ա կենում՝ Պուդին դղանը պուրում չի:

-Պու'ղի, ա մեռած, պա դղանը խե պուրո՞ւմ չըս:

-Մելիք, պա ասել չըս, դղանը ստակալ ա:

-Ա Պու'ղի, պա դղանը կստակե՞:

-Էդ հունց ա, ծնելին հվատում ըս, ստըկելին հվատում չըս: (ԼՀ)

2. Շափադտոր, ախճիգդ ահակին կյեշ ա, մինչն մին ծի, մին կավ, մին կալ չտաս, տղես հետե օգողը չըմ:

-Հինչ կընի, կտամ: Քյուռեն ճիրան հի՞նչ կպկասե:

Վեր համաձայնվում ըն , Շափադտորն ասում ա .

-Գլխես մատաղ ինիս, էս էսքանը տվե, մին տես տուք հիշքան քիդի տաք, վեր տանա իլածեն օգող ինի: (ԼՀ)

14.Ներկայացնել հետևյալ բառերի և բառաձևերի համարժեքները Ղարաբաղի բարբառի տարբեր խոսվածքներում: Կատարել եզրահանգում:

Գլխից, աչքով, բերանից, քիթ, ձեռքին, ոտք, մեջքը, դուռ, տնով, լեզու, ջուր, ձագ, գարուն, ձմեռ, գարի, դանակ, երեխայի, փոքրից, բարձր, բերդին, լայն, ծտից, գնալ, գալիք, բողկ, կոնֆետով, ծաղիկ, գալիս եմ, գնում եմ, բերելու եմ, բարձրացա, վարդից, Մարոյի, ծաղկով, ձեռքով, տնից, մարդով, գրքում:

15. Հոլովել տարբեր հոլովումների պատկանող գոյականներ ժամանակակից հայերենում և Ղարաբաղի բարբառում: Ցույց տալ ընդհանրություններն ու տարբերությունները:

16. Խոնարհել տարբեր խոնարհումների պատկանող բայեր ժամանակակից հայերենում և Ղարաբաղի բարբառում: Ցույց տալ ընդհանրություններն ու տարբերությունները:

17. Տեքստից առանձնացնել փոխակերպման ենթակա բոլոր միավորները և փոխակերպել:

1. Ես կանգնում եմ տաճարի կենտրոնում, նայում եմ վեր ու հպարտ եմ. այնտեղ՝ ամենավերևում՝ երկնքին մոտիկ, այն հրաշք գմբեթն է, որ հազար տարի առաջ դրել է Տրդատ ճարտարապետը՝ նա, որ Անին է կառուցել: Գմբեթը, գտնվելով ութսունհինգ մետր բարձրության վրա, հենվում է միայն պատերին: Երկնագույն մզկիթում(այն կառուցվել է տաճարից տասնմեկ դար հետո և նրա համեմատաբար հաջող պատճենն է) մենք տեսանք, որ գմբեթը իրենց ուսերին պահում են չորս վիթխարի պյուներ՝ յուրաքանչյուրը հինգ մետր տրամագծով: Երկնագույն մզկիթում առանձնապես հետաքրքիր են կապտավուն հախճապակյա պատերը՝ նուրբ զարդանախշերով, և կապույտ լուսամուտները, որոնց մեջ բեկվելով՝ արևի ճառագայթները թվում են գունավոր, անիրական:

Մեր ուղեկցողը՝ շատ գեղեցիկ մի թրքուհի, որ սովորում է Ստամբուլի համալսարանում, ամենայն մանրամասնությամբ պատմում է համարյա բոլոր որմնանկարների, խճանկարների մասին: Նա, պատմելով գմբեթի կործանվելու և վերակառուցվելու մասին, հասկանալի է, չի տալիս Տրդատ ճարտարապետի անունը: Չի տալիս նաև իմ հարցից հետո, և ես ստիպված եմ լինում ինքս ասել՝ դրան կցելով մի քիչ կեղծ ժպիտ և ահագին դիվանագիտություն: «Իմացե՛ք, օրիո՛րդ,- ասում եմ ես,- գուցե հետո ուրիշները ևս հարցնեն, կպատասխանեք»: «Շնորհակալություն», - պատասխանում է նա, և մենք իրար ենք նայում չթաքցրած հակակրանքով: Ինչու՞ նորից իմ մեջ արթնանում է նույն հարցը: Իսկ աղջկա աչքերում պատասխան կար. «Դուք չկաք, չեք եղել, ոչինչ չեք արել այս հողի վրա, և առհասարակ զարմանալի է, որ դուք ինչ-որ տեղ ապրում եք, հերիք չէ, Ստամբուլ եք եկել ու դեռ հարցեր եք տալիս»:

Հաջորդ օրը Ստամբուլի թերթերից մեկը տպագրել էր մեր խմբի լուսանկարը: Ես ու ընկերս, որ դիտմամբ կանգնել էինք առաջին շարքում, զարմանքով նայեցինք լուսանկարին. մենք չկայինք: Իսկ տեղեկության մեջ գրված էր. «Ստամբուլ են ժամանել չորս ադրբեջանցի և քսանչորս ռուս»: Մեր խմբում երեսունն էինք: Դա նշանակում է, որ մենք՝ ես ու ընկերս, առհասարակ չկայինք, չէինք եկել Ստամբուլ, չէինք մտել Երկնագույն մզկիթը և չէինք նայել Բոսֆորի ջրերին: (ՎՊ)

На арене цирка

2. Человек во фраке и в белой жилетке заглянул в комнатку и сказал:

— Сейчас ваш выход.

Хозяин достал из-под стола небольшой чемодан, затем сунул туда кота и собаку. Стало темно. Каштанка топталась по коту, царапала

стенки чемодана и от ужаса не могла произнести ни звука, а чемодан покачивался, как на волнах, и дрожал.

— А вот и я! — громко крикнул хозяин.

Собачка почувствовала, что после этого крика чемодан ударился о что-то твердое и перестал качаться. Послышался странный звук: кто-то хлопал и хохотал так громко, что у чемодана задрожали замочки.

Потом что-то щелкнуло, крышка чемодана открылась, и яркий свет ударил Каштанке в глаза. Она выпрыгнула из чемодана и, оглушенная гулом и хохотом, быстро забегала вокруг своего хозяина и залилась звонким лаем.

— Дорогой дядюшка! Дорогая тетушка! Милые родственники, как я рад! — закричал хозяин.

Он упал животом на арену, схватил кота и собаку и принялся обнимать их. Каштанка, пока хозяин тискал ее в своих объятиях, мельком оглядела тот мир, в который занесла ее судьба. Она была поражена его грандиозностью и на минуту застыла от удивления и восторга. Потом она вырвалась из объятий хозяина и от остроты впечатления закружилась на одном месте волчком. Новый мир был велик и полон яркого света. Куда ни взглянешь, от пола до потолка видны были одни только лица, лица, лица...

— Тетушка, прошу вас сесть! — скомандовал хозяин.

Помня, что это значит, собачка вскочила на стул и села. Она посмотрела на хозяина. Глаза его глядели серьезно и ласково, но на лице была нарисована широкая неподвижная улыбка. Сам он хохотал, прыгал и делал вид, что ему очень весело в присутствии множества людей. Каштанка поверила его веселости, подняла вверх свою мордочку и радостно залаяла.

— Сейчас мы с дядюшкой будем плясать, — объявил хозяин публике.

Кот в ожидании, когда его заставят делать глупости, стоял и равнодушно поглядывал по сторонам. Плясал он вяло, небрежно и угрюмо. По его движениям, по хвосту и по усам было видно, что он глубоко презирал и толпу, и яркий свет, и хозяина, и себя. После танца он зевнул и сел.

— Тетушка, — сказал хозяин, — а теперь мы с вами споем.

Он вынул из кармана дудочку и заиграл. Собачка, не вынося музыки, беспокойно задвигалась на стуле и завывала. Со всех сторон слышались аплодисменты и хохот. Во время исполнения одной очень высокой ноты наверху среди публики кто-то громко ахнул.

— Папка, а ведь это наша Каштанка! — крикнул детский голос.

— Каштанка и есть! — подтвердил мужской голос.

Кто-то свистнул, и два голоса громко позвали:

— Каштанка! Каштанка!

Собачка вздрогнула и посмотрела туда, где кричали. Она вспомнила эти два лица, спрыгнула со стула, перескочила через барьер, потом через чье-то плечо и очутилась в ложе. Чтобы попасть на следующий ярус, нужно было перескочить высокую стенку. Каштанка не смогла допрыгнуть и сползла назад по стене. Ее подняли, а потом она переходила с рук на руки, лизала чьи-то лица, поднималась все выше и выше и наконец попала на галерку.

Спустя полчаса собачка весело бежала за Лукой Александровичем и Федюшкой. Каштанка глядела им обоим в спины, и ей казалось, что она никогда не терялась. (АЧ)

3. Gabriela worked for a multinational company as a successful project manager in Brazil and was transferred to manage a team in Sweden. She

was excited about her new role but soon realised that managing her new team would be a challenge.

Despite their friendliness, Gabriela didn't feel respected as a leader. Her new staff would question her proposals openly in meetings, and when she gave them instructions on how to carry out a task, they would often go about it in their own way without checking with her. When she announced her decisions on the project, they would continue giving their opinions as if it was still up for discussion.

After weeks of frustration, Gabriela emailed her Swedish manager about the issues she was facing with her team. Her manager simply asked her if she felt her team was still performing, and what she thought would help her better collaborate with her team members. Gabriela found her manager vague and didn't feel as if he was managing the situation satisfactorily.

What Gabriela was experiencing was a cultural clash in expectations. She was used to a more hierarchical framework where the team leader and manager took control and gave specific instructions on how things were to be done. This more directive management style worked well for her and her team in Brazil but did not transfer well to her new team in Sweden, who were more used to a flatter hierarchy where decision making was more democratic. When Gabriela took the issue to her Swedish manager, rather than stepping in with directions about what to do, her manager took on the role of coach and focused on getting her to come up with her own solutions instead.

Dutch social psychologist Geert Hofstede uses the concept of 'power distance' to describe how power is distributed and how hierarchy is perceived in different cultures. In her previous work environment,

Gabriela was used to a high power distance culture where power and authority are respected and everyone has their rightful place. In such a culture, leaders make the big decisions and are not often challenged. Her Swedish team, however, were used to working in a low power distance culture where subordinates often work together with their bosses to find solutions and make decisions. Here, leaders act as coaches or mentors who encourage independent thought and expect to be challenged.

When Gabriela became aware of the cultural differences between her and her team, she took the initiative to have an open conversation with them about their feelings about her leadership. Pleased to be asked for their thoughts, Gabriela's team openly expressed that they were not used to being told what to do. They enjoyed having more room for initiative and creative freedom. When she told her team exactly what she needed them to do, they felt that she didn't trust them to do their job well. They realised that Gabriela was taking it personally when they tried to challenge or make changes to her decisions, and were able to explain that it was how they'd always worked.

18. Փոխակերպել հետևյալ նախադասությունները և բացատրել, թե ինչ փոփոխություններ են կատարվում փոխակերպման ընթացքում:

Ա. 1. Երևի նրա մանկական սիրտը նախազգում էր, որ մի օր այդ փորձանքը պատահելու է:

2. Դա հենց այն է, ինչը պահում է տիեզերական հավասարակշռությունը:

3. Ես գնում էի մի երկիր, որ ապաստան էր դարձել շատ բախտախնդիրների համար:

4. Չնայած մենք մշտապես դատապարտում ենք սուտը, երբեք չենք խորշում օգտվել նրա ծառայություններից:

5. Ազատվելով մորս գրկից՝ ես կառք նստեցի:

6. Բանվորը հարստահարվում է այսօր գործատեր դարձած երեկվա բանվորից:

7. Այդ միջավայրում նախանձի առարկա էր դառնում մերձավորին կոխկոտելով առաջ գնացողը:

8. Նահանգապետին ներկայանալու հեռանկարը կատարյալ պատիժ էր Համբարձումի համար:

9. Ես սիրեցի անքեն հոգիդ և երգերդ մեղմ ու բեկբեկ:

10. Պետությունը և ժողովուրդը պետք է պահպանեն Մատենադարանը:

11. Հուզվեցի մի փուչ խոսքից:

12. Այդ վանքը գնահատվել է նաև օտար ճարտարապետների կողմից:

13. Դու արածներիդ մասին մտածի՛ր, թող ես էլ իմ գործը անեմ, չթաքցրած հեզնանքով ասաց մտախոհ իշխանը եղբորը:

14. Նա ասում է, որ չի ուզում անիմաստ ժամանակ վատնել, և գնում է դասի:

Բ. 1. Лодка, увлекаемая сильным потоком, стремительно неслась вниз по течению.

2. Книга, прочитанная школьником, сиротливо лежала на книжной полке.

3. Старые письма, которые хранила бабушка, пожелтели от времени.

4. Мы подошли к домику, который стоял на небольшой полянке и был освещен яркими лучами солнца.

5. Внимание его привлек звук, послышавшийся сверху.

6. Тягучая и властная тишина овладела лесом.

7. Солнце уже спряталось в черной туче, отдыхавшей на гребне западных гор.

8.Очерки деревьев, обрызганных дождем и взволнованных ветром, начали выступать из мрака.

9.Электричка проехала несколько станций без остановки и остановилась только в Люберцах.

10.Прочитанные в детстве книги помнятся всю жизнь.

11.Море утихло за ночь и сейчас еле плескалось в скалах.

12.“Вы любите читать?” – спросила она, когда они сели.

13.“Мне нужно с вами поговорить”, - чуть слышно сказал он.

14.“Теперь не пропаду, - подумала она, - тропинка куда-нибудь приведет”.

15.“Из всех моих сражений, - говорил позже Наполеон, - самое ужасное то, которое я дал под Москвой”.

16.В голове у меня промелькнула мысль: “Лучше мне уехать отсюда”.

17. Գազմել հետևյալ միջուկային նախադասությունների փոխակերպները, բացատրել փոխակերպման հատուկ կանոնները հայերենում, ռուսերենում, անգլերենում:

Ա. 1) Գարնանային այս օրերին եղյամը ծածկում է ընդարձակ դաշտերը:

Զորքերի բազմությունը ծածկեց Գեղամա ծովակի ափը:

Հայերի անսպասելի հարձակումը խաժամուժին խուճապի մատնեց:

2) Երբ հասան վրաններին, առաջին ձիավորը շարունակեց ճանապարհը:

Հոգեբանական գիտությունը հաճախ օժանդակում է, որ մարդ արարածը ճանաչի ինքն իրեն:

Նա խոսեց այն գյուղացիների հետ, որոնք հող էին հերկում:

3) –Ամեն լեզու իրավունք ունի ճշմարտությունն ասելու,-
պատասխանեց Մովսես Վարդապետը:

-Մի' մոռանա, որ տանը մեզ սպասող կա,-ասաց Անին:

-Միհրա՛ն, գտի՛ր նախկին արքայական ընկերներին,- հանկարծ
բացականչեց պառավը:

4) Ձինվորները տեղ հասան:

Այդ օրերը պետք է կիրառել:

Ոչ թե նա, այլ ես եմ գնալու:

Ես և նա կմեկնեն:

Բ. 1. В Москву самолеты привозят много красивых цветов из
разных республик.

Я читала все нужные газеты.

2. Когда Радищев описывает положение крестьян, он показывает
ужасающую нищету народа.

Дом отдых стоял на берегу залива, который был покрыт мелкой
галькой.

3. Он рассказывает мне как-то: “Любил я очень коньки, но увидел,
что это мешает учиться, бросил”.

4. Гамзатов писал: “ Я лично горжусь тем, что моя биография
связана с хлебом”.

Գ.1. When you cross the street, you must be careful.

2. After he hadn't received an answer to his letter, he sent a telegram.

3. We often see this artist in the club.

4. Mother bought a new dress for Ann.

5. Tom said; "I don't know why you are so much surprised".

6. Harry said to Ann; "I shall give you this book tomorrow."

19. Գրել միջուկային նախադասություններ և նրանց փոխակերպները ներկայացնել բառակապակցություններով:

20. Փոխակերպել հետևյալ բառերի խոսքիմասային իմաստները.

1. Ծուլլ, ագահ, հերոս, բարի, ժանգ, մեծ, հյուր, դանդաղ, երգ, նկար, գիր, լավ, սեր, մտերիմ, չար, տասը, աշակերտ, նույն, ինքն, յոթ, բարձր, ժպտալ:

2.Старик, страдать, воин, великий, тайно, слово, сюжет, высоко, легкий, ветерок, летать, страх, суровый, одиннадцать, творить, себя, один, ненависть, этот, гордиться, хороший.

3.Child, kind, sell, prefer, eight, instruct, danger, music, science, happy, high, lazy, self, relate, possible, success, one, differ, govern.

21.Փոխակերպել հետևյալ կառույցները, բերել նմանատիպ այլ օրինակներ.

Ա.

- դերբայական դարձված-----բառակապակցություն
պարկը դրած ուսին, գլխարկը դրած գլխին
- բառակապակցություն-----բառաբաղադրություն
աչքերը թուխ, գրչի ծայր
- համադրական հոլովածև-----կապական հոլովառություն
պայուսակի մեջ, սեղանի վրա
- ստացական
հատկացյալ-----ստացական
բառակապակցություն
գիրքս, ձեռքդ
- գոյական-----ածական
մայր-
- ածական-մակբայ

մեղմ-

- ածական-բայ

բարի-

- գոյական-բայ

երգ-

- գոյական-մակբայ

առավոտ-

- թվական-գոյական

տասը-

Լեզվի ծագումը և զարգացումը Ինքնաստուգման հարցեր

1. Ինչո՞վ է պայմանավորված լեզվի ծագումը:
2. Լեզվի ծագման ի՞նչ բացատրություններ կան:
3. Ի՞նչ է իրենից ներկայացնում լեզվի ծագման գիտական բացատրությունը:
4. Լեզվի զարգացման ի՞նչ միջոցներ կան:
5. Որո՞նք են լեզվի զարգացման ներքին օրենքները:
6. Որո՞նք են լեզվի զարգացման արտաքին օրենքները:
7. Որո՞նք են համընդհանուր օրենքները:
8. Որո՞նք են մասնավոր օրենքները:
9. Ի՞նչ է ապահովում հարմարության ձգտումը:
10. Ինչի՞նչ է հանգեցնում տնտեսման սկզբունքը:
11. Ինչի՞նչ է հանգեցնում համաբանության սկզբունքը:
12. Ինչի՞նչ է հանգեցնում համառոտման սկզբունքը:
13. Ինչի՞նչ է հանգեցնում կապակցելիության սկզբունքը:

Աշխարհի լեզուների դասակարգումը Ինքնաստուգման հարցեր

1. Աշխարհի լեզուների ինչպիսի՞ դասակարգումներ կան:
2. Ի՞նչ է ընկած լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմքում:
3. Ո՞րն է կոչվում հիմք լեզու:
4. Ո՞ր լեզուներն են կոչվում ցեղակից:
5. Ի՞նչ է լեզվաընտանիքը, ինչպիսի՞ լեզվաընտանիքներ կան:
6. Ի՞նչ ճյուղերից է կազմված հնդեվրոպական լեզվաընտանիքը:
7. Ի՞նչ խմբերի են բաժանվում լեզուներն ըստ ձևաբանական դասակարգման:
8. Որո՞նք են կոչվում թեքական լեզուներ:
9. Որո՞նք են կոչվում անջատական լեզուներ:
10. Որո՞նք են կոչվում կցական լեզուներ:
11. Որո՞նք են կոչվում ներմարմնավորյալ լեզուներ:
12. Ի՞նչ են իրենցից ներկայացնում աշխարհագրական, ստադիալ, կոնցեպտուալ, հոգեբանական և ըստ շրջանների դասակարգումները:

Գործնական առաջադրանքներ

1. Բերել կցականությամբ արտահայտվող քերականական ձևեր հայերենից, ռուսերենից և անգլերենից:
2. Բերել թեքականությամբ արտահայտվող քերականական ձևեր հայերենից, ռուսերենից և անգլերենից:
3. Բերել անջատականությամբ արտահայտվող քերականական ձևեր հայերենից, ռուսերենից և անգլերենից:

4. Օրինակներով ցույց տալ, թե ինչպես են արտահայտվում միևնույն քերականական իմաստները տարբեր լեզուներում:

5. Բերել քերականական այնպիսի ձևեր, որոնց կազմությանը մասնակցում են քերականական արտահայտության երկու միջոցներ:

Լեզվական մակարդակներ և միավորներ

Ինքնաստուգման հարցեր

1. Լեզվաբանական կառուցվածքի ինչպիսի՞ մակարդակներ կան, և ի՞նչ միավորներով են դրանք ներկայացվում:

2. Ի՞նչ սկզբունքներով են դասակարգվում լեզվի մակարդակները:

3. Ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում լեզվական մակարդակների միավորները:

4. Ի՞նչ է հարացույցը:

5. Ի՞նչ է հնչյութաբանական հարացույցը:

6. Ի՞նչ է բառաիմաստաբանական հարացույցը:

7. Ի՞նչ է բառակազմական հարացույցը:

8. Ի՞նչ է ձևաբանական հարացույցը:

9. Ի՞նչ է շարահյուսական հարացույցը:

10. Ի՞նչ է շարակարգը:

11. Ինչպե՞ս է արտահայտվում շարակարգային հարաբերությունը հնչյութային մակարդակում:

12. Ինչպե՞ս է արտահայտվում շարակարգային հարաբերությունը ձևային մակարդակում:

13. Ինչպե՞ս է արտահայտվում շարակարգային հարաբերությունը բառային մակարդակում:

14. Ինչպե՞ս է արտահայտվում շարակարգային հարաբերությունը ձևաբանական մակարդակում:

15. Ինչպե՞ս է արտահայտվում շարակարգային հարաբերությունը շարահյուսական մակարդակում:

Գործնական առաջադրանքներ

1. Լեզվի հնչյունական մակարդակի միավորներով կազմել հարացուցային շարքեր:

2. Լեզվի ձևային մակարդակի միավորներով կազմել հարացուցային շարքեր:

3. Կազմել բառակազմական և բառաիմաստաբանական հարացուցային շարքեր:

4. Լեզվի ձևաբանական մակարդակի միավորներով կազմել հարացուցային շարքեր:

5. Լեզվի շարահյուսական մակարդակի միավորներով կազմել հարացուցային շարքեր:

6. Կազմել հետևյալ բառերի բառակազմական և բառաիմաստաբանական հարացույցները:

Ա. Արդար, ազահ, ամիս, արև, աստղ, բարի, բարձր, բլուր, բույր, գարի, գարուն, գիր, գունդ, գյուղ, դդում, դար, ելակ, երամ, երեխա, երգ, զանգ, զարդ, թուղթ, թարմ, ժպիտ, իր, լեռ, լուր, խնձոր, ծաղիկ, կատու, հուր, ձեռք, մատ, մանուկ, նկար, շուն, ոգի, ոսկի, չար, պապ, ջուր, ջերմ, ռուս, վարդ, տուն, տարի, ընկ, ցորեն, ուրախ, օր, քամի:

Բ. Весна, год, гора, дерево, дом, зеленый, зима, золотой, кольцо, кот, минута, мост, окно, река, ребенок, свет, стул, свежий, собака, тьма, туча, цветок, человек, черный, язык.

Գ. Honest, relative, century, star, high, wheat, summer, daughter, fresh, paper, day, flower, water, song, minute, hill, warm, smile, house, grapes, hand, strawberry, painting, rose, angry, wolf, village, mountain, fire, his, spirit, merry, cold, silver, pumpkin, decade, mother, day, greedy, fog, smart, square, foot, planet, French, phone.

7. Հետևյալ բառակազմական ձևույթներով կազմել բառերի հա- րացուցային շարքեր՝

Ա. 1.-ակի, -անի, -անք, -ական, -ցի, -յան, -արին, -ային, -յա, -մունք, -ենի, -երեն, որեն, -ություն, -ք, -քար, -ոտի, -որդ, -ուրդ, -ուստ, -ստան, -ում,

2. ան-, դժ-, ապ-, համ-, հակ-, հոմ-, ներ-, դեր-, տ-, ենթ-, փոխ-, գեր-, վեր-, ստոր-:

Բ. 1.-к-, -ик-, -ек-, -ок-, -ёк-, -еньк-, -оньк-, -ечк-, -очк-, -ушк-, -юшк-, -ышк-; -ник- -чик- -щик- -тель-; -ниц- -к-; -чив-, -лив-, -оват-, -ов-, -овит-, -еват-, -ев-, -евит-,

2. без- (бес-), в- (во-), воз- (вос-, возо-), вз- (вс-), вы-, до-, за-, из- (ис-, изо-), на-, наи-, недо-, над- (надо-), не-, низ-, о-, об- (обо-), обез- (обес-), от- (ото-), по-, под- (подо-), пере-, пре-, пред- (предо-), при-, про-, раз-, рас-, с- (со-), через- (черес-).

Գ. 1. -ness, -ist, -ism, ship, -ment, -dom, -ance, -th, -ity, -ant, -ent, -tion, -sion, -able, -al, -ic, -ish, -ous, -ful, -ive, -less, -fy, -ize, -ate,

2.un-, pre-, post-, ir-, il-, in-, fore-, mis-, un-, dis-, co-, en-, re-, over-, sur-.

8. Առանձնացնել՝

ա. բառաձևերը և վերականգնել համապատասխան հարացույցի կարգային բոլոր անդամները.

բ. այն բառերը, որոնց ձևաբանական հարացույցը թերի է.

գ.այն բառերը, որոնք չունեն թեքման հարացույց:

Ա. 1. Ես չեմ հավատում ոչ մի բանի և ոչինչ չեմ ժխտում: Այն, ինչը որ կարելի է երևակայել, նույնքան մոտ է ճշմարտությանը, որքան և այն, ինչը կարելի է ապացուցել մաթեմատիկորեն:

2. Քանի դեռ մարդիկ կմեռնեն ազատության համար, ազատությունը չի մեռնի:

3. Քո մերկ մարմինը պետք է պատկանի նրան, ով կսիրի քո մերկ հոգին:

4. Մի՛ վաճառիր սիրտդ ոսկով ու զարդարանքներով: Իմացի՛ր, որ ամենամեծ աղամանդը արևն է, իսկ այն հավասարապես լուսավորում է բոլորին:

5. Պոեզիան, ըստ էության, սիրային նամակ է՝ ուղղված ամբողջ աշխարհին:

6. Աշխարհում գոյություն ունի մարդկանց յուրօրինակ եղբայրություն, մարդիկ, որոնք կրքոտ ձգտում ունեն դեպի գիտելիքը:

7. Ես կարծում եմ, թե հավատը մեր բանականության շարունակությունն է ակնհայտի սահմաններից դուրս: Դա այն բանալին է, որը երևան է հանում անճանաչելին: Ժխտել հավատը՝ նշանակում է հերքել ինքդ քեզ և քո մեջ այն ոգին, որը առաջ է մղում քո ստեղծագործ ուժը:

8. Երբ ես տեսնում եմ, թե մինչև ինչ աստիճան են խեղաթյուրվում նույնիսկ ամենամոտ անցյալի իրադարձությունները, սկսում եմ միանգամայն կասկածամտորեն վերաբերվել պատմությանը որպես այդպիսին: Ես կասեի, որ արվեստի ստեղծագործությունները պարունակում են շատ ավելի ճշմարիտ փաստեր և մանրամասներ, քան պատմական տրակտատները:

9. Ծիծաղը մարտահրավեր է ճակատագրին: Մենք ծիծաղում ենք՝ գիտակցելով մեր անկարողությունը բնության ուժերի հանդեպ... Ծիծաղում ենք, որպեսզի չխելագարվենք:

10. Որտեղի՞ց են վերցվում գաղափարները: Միայն համառ որոնումներից, որ սահմանակից են խելագարության:

Բ. Масленица - древний славянский праздник, корни которого уходят в языческую культуру. Это весёлые проводы зимы, полные ожидания тепла, обновления природы. Проходили века, менялась жизнь, появлялись новые праздники, но Масленица продолжала жить. Это всегда был самый весёлый и любимый славянский праздник. Целую неделю люди не думали о делах и домашних заботах. Считалось, что если плохо и скучно провести Масленицу, то весь год ждёт неудача в делах. Веселье и изобилие на Масленицу было символом благополучия, процветания, успеха. Главное угощение на Масленице – блины. Круглые, румяные, горячие, они символизировали солнце. Их пекли и ели всю неделю. Каждый день масленичной недели имел свои обряды. А в последний день, воскресенье, делали из соломы чучело зимы, наряжали его в женскую одежду и несли через всю деревню, а потом сжигали, призывая весну.

Գ. This lecture begins with a question: what makes a happy life?

Now, I'm going to give you one possible answer. A happy life is a life in which you are completely absorbed in what you do. Now, how does this compare with what you and your partner said?

This answer comes from the work of Mihaly Csikszentmihalyi and the theory of flow. Csikszentmihalyi is a psychologist who has spent much of his professional life on the study of what makes people happy and how we can find happiness.

Csikszentmihalyi suggests the theory that happiness is not caused by external events or things that happen to us. Our perception of these things and how we see these events either makes us happy or sad. In other words, if we want happiness, we have to actively look for it. However, this does not mean that we should always look for happiness! Csikszentmihalyi believed that our happiest moments happen when we are in a state of flow.

The theory of flow can be summarised like this: when we are totally involved in, or focused on, what we are doing, we are in a state of flow. Csikszentmihalyi got the inspiration for this theory when he noticed how artists worked in a studio. They completely lost track of time, they didn't notice they were hungry or tired, and they could work for hours, even days, without stopping. Anyone I have spoken to who has experienced this state of concentration has said it's difficult to explain. The best way to explain it is that it is like being in a river and the flow of the water carries you away.

9. Ներկայացնել բառեր, որոնց համակարգային ձևերը շեղվում են կանոնավոր հարացույցներից:

10. Համապատասխան օրինակներով դիտարկել շարակարգությունը հնչյունական մակարդակում:

11. Համապատասխան օրինակներով դիտարկել շարակարգությունը ձևային մակարդակում:

12. Համապատասխան օրինակներով դիտարկել շարակարգությունը բառային մակարդակում:

13. Համապատասխան օրինակներով դիտարկել շարակարգությունը ձևաբանական մակարդակում:

14. Համապատասխան օրինակներով դիտարկել շարակարգությունը շարահյուսական մակարդակում:

ՀԱՅՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
Ա. ՀԱՅՑՈՒՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ արտասանական օրգաններ են մասնակցում խոսողությանը:

2. Որո՞նք են հնչյունական համակարգի կառուցվածքային տարրերը:

3. Հնչյունների դասակարգման ի՞նչ սկզբունքներ կան:

4. Ի՞նչ խմբերի են բաժանվում հնչյուններն ըստ ձայնաբանական հիմունքի:

5. Ի՞նչ փուլեր են առանձնացվում հնչյունների արտաբերության ժամանակ:

6. Ի՞նչ հատկանիշներով են դասակարգվում ձայնավորները, և ի՞նչ արտասանական օրգաններ են մասնակցում նրանց արտաբերությանը:

7. Ի՞նչ հիմունքներով են դասակարգվում բաղաձայնները:

8. Ի՞նչ խմբերի են բաժանվում բաղաձայներն ըստ արտաբերման եղանակի, տեղի, ըստ կազմության, ըստ փափկության ու կոշտության, ըստ հնչեղության, ըստ արձագանքման բնույթի, ըստ ձայնային հատկանիշների, ըստ արտաբերիչ օրգանների լարվածության չափի և արտամղվող օդի հոսանքի ուժի:

9. Ի՞նչ հիմունքով են կատարվում հնչյունների ենթահամակարգ-գումները և ինչպե՞ս են արտահայտվում:

10. Որո՞նք են բաղաձայնական համակարգի ենթահամակարգերը:

11. Ի՞նչ է բաղաձայնական տեղաշարժը, և ի՞նչ աստիճանակարգությամբ է այն ներկայացվում:

12. Ի՞նչ է երկրաբառը:

13. Ի՞նչ է նշանակում կիսաձայն: Ինչպիսի՞ կիսաձայն հնչյուններ կան:

14. Ի՞նչ է նշանակում քմայնացում, շրթնայնացում, ռնգայնացում, շնչեղացում:

15. Ի՞նչ է հնչյունի երկարությունը, կարճությունը, կրկնությունը:

16. Ի՞նչ է վանկը:

17. Ի՞նչ է շեշտը: Շեշտի ի՞նչ տեսակներ կան: Ի՞նչ հիմունքներով են դրանք առանձնացվում:

18. Ինչո՞ւ վ են իրարից տարբերվում վանկային, բառային և տրամաբանական շեշտերը:

19. Ինչպիսի՞ն է լինում շեշտը՝ ըստ շեշտակիր միավորների ոլորտում գրաված դիրքի:

20. Ո՞րն է կոչվում կայուն շեշտ:

21. Ո՞րն է կոչվում ազատ շեշտ:

22. Ի՞նչ շեշտեր կան ըստ ուժգնության, հնչեղության աստիճանի և գործառական կարևորության:

23. Ի՞նչ է հնչերանգը: Ի՞նչ տարրերից է այն կազմված, և ի՞նչ կարգերի են բաժանվում այդ տարրերն ըստ իրենց դերի:

24. Ի՞նչ է հնչյունական շղթան և ի՞նչ միավորներից է կազմված:

Գործնական առաջադրանքներ

1. Նկարագրել հնչարտաբերական գործարանների աշխատանքը հետևյալ հնչյուններն արտաբերելիս (թոքեր, շնչափող, կոկորդ, քթի խոռոչ և բերանի խոռոչ՝ լեզու, քիմք, ատամներ և շրթունքներ):

Ա. ա, ու, ի, ը, օ, գ, կ, դ, տ, ր, ն, հ, խ, զ, ս, ժ, շ, փ, ֆ, չ, բ, պ, մ, ն, լ

Բ. а, у, ы, и, э, о, х, ц, ч, ш, в, ф, ж, ш, б, п, р, л, й

Գ. a, e, o, i, y, u, b, p, g, m, n, k, l, f, s, r, c, d, t, h, v, z

2. Առանձնացնել՝

1. ձայնավորները և տալ նրանց ամբողջական բնութագրությունը:

2. բաղաձայնները և տալ նրանց ամբողջական բնութագրությունը:

Ա. Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց
Երկար դարերով, ահեղ հարվածով,
Թեպետև էսպես ցրվեց, տարածվեց,
Ջրգեց հողեհող, փրռեց ծովեծով,
Վկա է, սակայն, բովանդակ երկիր,
Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,
Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր,-
Կենդանի է դեռ հայության ոգին: (ՀԹ)

Բ. Не привыкайте никогда к любви!
Не соглашайтесь, как бы ни устали,
Чтоб замолчали ваши соловьи
И чтоб цветы прекрасные увяли.
И, главное, не верьте никогда,
Что будто всё проходит и уходит.
Да, звёзды меркнут, но одна звезда
По имени Любовь всегда-всегда
Обязана гореть на небосводе! (Յ Ա)

Գ. My heart's in the Highlands, my heart is not here;
My heart's in the Highlands, a-chasing the deer;
Chasing the wild-deer and following the roe,
My heart's in the Highlands, wherever I go.
Farewell to the mountains high-cover'd with snow;
Farewell to the straths and green vallies below;

Farewell to the forests and wild-hanging woods;

Farewell to the torrents and loud-pouring floods. (RB)

**3.Ո՞ր հնչյուններին են հատուկ հետևյալ հատկանիշները՝
ձայնավորների՞ն, թե՞ բաղաձայններին.**

ա) վերին բարձրացում, ետին շարք, շրթնայնացած

բ) առաջնալեզվային, ռնգային, հպական, ձայնորդ

գ) միջին բարձրացում, միջին շարք, ոչ շրթնայնացած

դ) ետնալեզվային, հպական, ձայնեղ

ե) առաջնալեզվային, հպաշփական, խուլ, շնչեղ, ոչ սուլաշչական, բարդ

զ) վերին բարձրացում, առաջին շարք, ոչ շրթնայնացած

4.Որոշել այն հայերեն բառերը, որոնց կազմի մեջ համապատասխանաբար մտնում են հետևյալ հնչույթները.

Ա. 1) երկշրթնային բաղաձայն, ռնգային, հպական, ձայնորդ, պարզ

2) ետին շարքի ստորին բարձրացման ոչ շրթնայնացած ձայնավոր

3) առաջնալեզվային բաղաձայն, ոչ ռնգային, շփական, ձայնորդ, միաթրթիռ, պարզ

4) առաջնալեզվային բաղաձայն, պայթական, ձայնեղ, պարզ:

Բ. 1) առաջնալեզվային բաղաձայն, շփական, ձայնորդ, ոչ թըրթռուն, պարզ

2) վերին բարձրացման ետին շարքի շրթնայնացած ձայնավոր

3) առաջնալեզվային բաղաձայն, ոչ ռնգային, շփական, միաթրթիռ, պարզ

4) առաջնալեզվային, ոչ ռնգային, պայթական, խուլ, շնչեղ, բարդ, ոչ սուլաշչական:

Գ. 1) առաջնալեզվային, ոչ ռնգային, շփական, խուլ, սուլական, պարզ

2) միջնալեզվային, շփական, ձայնորդ, ոչ թրթռուն, պարզ

3) վերին բարձրացման ետին շարքի շրթնայնացած ձայնավոր

4) ետնալեզվային, պայթական, խուլ, շնչեղ, ոչ սուլաշչական, բարդ:

5. Որոշել այն ռուսերեն բառերը, որոնց կազմի մեջ համապատասխանաբար մտնում են հետևյալ հնչույթները.

Ա. 1) ետին շարքի վերին բարձրացման շրթնայնացած ձայնավոր

10.Բերել բառազույգեր, որոնցում ենթաձևություններն ազատորեն միմյանց փոխարինեն:

11.Բերել լրացուցիչ բաշխման մեջ գտնվող ենթաձևություններով օրինակներ:

12. Հետևյալ բառաձևերում առանձնացնել քերականական համանուն ձևույթները և բացատրել դրանց իմաստները:

Ա. Վաղուց, խաղաղ, գիրքս, շնկշնկան, փախչել, գնացի, բերեի, ջրի, գրելու, չտեսա, չտես, քաղաքում, բերում էր, պիտի գրի, չեմ գրի, ուտեցրու, փռշու, ծագում, խաղա, ծիածան, տեսան, լեռան, հեռասյան, փախչել, կարդա՛, չեմ կարդա, կարդա, փախել է, թռչել, թռել է, միտք, գյուղացիք, անգլիացիք, բերեցին, գրեցիք, ծաղկին, պարսից, Պարսկաստանից, այգուց, հնուց, բերես, չհաս, չկամ, չխոսկան:

Բ. сбежать, скатиться, сбегать, сходить, **носовой, носильщик, медью, медовый, горевать, гореть, отравя, травяной**, проживать, прожевать, **красавица, краснота, отрезать, отдать, отговорить**, лесистый, гитарист, **проректор, прослушать**, писатель, учительская, ножка, москвичка, **преклонять, преуспеть, приоткрыть, пришкольный, мамин, горошина, столбина, водицы, сестрицы, худой, бородой**.

Գ. Recognise, speak, central, bring, brought, memorise, selfish, immortal, illegal, impossible, incorrect, inactive, preparing, written, walking, spoke, beautiful, useless, rainbow, daydream, childish, dirty, windy, unable, smoking, done, going, intensify, whitewash, reddish, agreement, inhale, dream, ideal, laugh.

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է ուսումնասիրում բառագիտությունը:
2. Որո՞նք են բառագիտության բաժինները:
3. Ի՞նչ է բառը:
4. Ինչպիսի՞ն է կապը բառի իմաստի և նրա արտաքին ձևի միջև:
5. Ի՞նչ է բառույթը, ի՞նչ է բառաձևը:
6. Ինչո՞վ է տարբերվում բառը ձևային և բառակապակցությունից:

Ա. Բառակազմություն
Լեզվական կաղապարներ: Բառաբարդման կաղապարներ:
Ածանցման կաղապարներ
Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է ուսումնասիրում բառակազմությունը:
2. Ինչպիսի՞ն կարող է լինել բառը ըստ կազմության:
3. Ո՞ր դեպքում կարող է բառը բառակազմական տեսակետից ենթարկվել փոփոխության:
4. Ի՞նչ է արմատը, արմատի տարբերակը:
5. Ի՞նչ է ածանցը: Քանի՞ տեսակ կարող են լինել ածանցները:
6. Ո՞ր բառերն են կոչվում նախածանցավոր, վերջածանցավոր, համածանցավոր:
7. Ո՞ր բառերն են կոչվում բարդ:
8. Բարդությունների քանի՞ տեսակ կա, և դրանցից յուրաքանչ-յուրը ի՞նչ ենթատեսակներ ունի:
9. Ի՞նչ է կաղապարը:
10. Ի՞նչ է կաղապարավորումը:

11. Որո՞նք են կաղապարավորման տարածքները:
12. Ի՞նչ մասնակաղապարներ ունի բառաբարդման կաղապարը:
13. Ի՞նչ տեսակներ ունի բարդության կաղապարը:
14. Որո՞նք են կոչվում սերող հիմքեր:
15. Որո՞նք են կոչվում բաղադրող հիմքեր:
16. Որո՞նք են կոչվում հիմնային բաղադրիչներ:
17. Ի՞նչ է ածանցների կապակցելիությունը:
18. Ո՞րն է ածանցների իմաստային հատկանիշը:
19. Ի՞նչ մասնակաղապարներ ունեն նախաձանցման կաղապարները:
20. Ի՞նչ մասնակաղապարներ ունեն վերջաձանցման կաղապարները:

Գործնական առաջադրանքներ

1. Խմբավորել տեքստի բառերն ըստ կազմության (պարզ, ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր):

ա) Մի օր Իրանի շահը հյուր է գալիս Արցախում ապրող խանին: Մեծարգո հյուրի պատվին խանը շքեղ հյուրասիրություն է կազմակերպում: Երփնավառ ու տարաթույր ծաղիկներով զարդարված պարտեզում նստած՝ շահը համտեսում էր ախորժագրգիտ խորտիկներ, տարատեսակ ըմպելիքներ ու քաղցրածոր մրգեր: Գինարքուքից հետո խանը հյուրին որսի է հրավիրում: Ոսկեպախուրց նժույգներ հեծած՝ նրանք բարձրանում են սիգապանծ լեռը, որը պատված էր զմրուխտաշող անտառներով: Երբ հասնում են լեռան երկնամուխ կատարին, շահն ըմբռնվում է զովասուն օդն ու բացականչում:

- Ի՞նչ պարզ ու մաքուր օդ է, կարծես շուշից (ապակուց) լինի: Այստեղ պետք է մի լավ քաղաք կառուցել:

Այդպես էլ անում են: Կառուցում են գողտրիկ մի քաղաք և անվանում <<Շուշի>>:

բ) Հազար ինը հարյուր վեց թվականն էր: Կոմիտասը ուղևորվեց Փարիզ՝ միջազգային փառատոնին մասնակցելու նպատակով: Նա օրնիբուն աշխատում էր՝ պարզորոշ ըմբռնելով, որ արվեստով օտար ունկնդրին պատկերացում պիտի տա Հայաստանի և հայ ժողովրդի՝ մինչ այդ աշխարհին անծանոթ մշակույթի մասին:

Լեփ-լեցուն է Փարիզի սրահներից մեկը. շուրջ բոլորը ծաղիկներ են, դահլիճում՝ հանդիսականներ՝ հիացական արտահայտությամբ, բեմի վրա՝ անվանի երաժիշտներ: Եվ ահա բեմ դուրս եկավ մի հոգևորական՝ սև սքեմով ու վեղարով: Դահլիճը մի պահ ապշեց, ո՞վ էր այդ մարդը և ի՞նչ է անելու: Ինրպե՞ս պիտի դիմանա համաշխարհային աստղերի մրցակցությանը: Ջսպելով հոգու ալեկոծությունը՝ Կոմիտասը մոտեցավ դաշնամուրին՝ ներքուստ զգալով թպրտացող սրտի թրթիռը:

Նա դարձավ փառատոնի դափնեկիր:

Բ. В далекие доисторические времена славяне поклонялись языческим богам, но в конце первого тысячелетия на Руси распространяется христианство. Старинные рукописи, в которых говорится о важнейших фактах истории, или древние летописи свидетельствуют о том, что 988 год – это год крещения Руси.

В Киеве на высокой горе на берегу Днепра установлен памятник князю Владимиру, во времена княжения которого состоялось крещение Руси.

Крещение было важнейшим событием в истории славян, оно имело большое значение для развития государства, культуры, духовной жизни народа. Русская Православная церковь несла людям

идеи добра, справедливости, миролюбия, благородства и вела борьбу с насилием, жестокостью и злом.

¶.The history of graffiti

The first drawings on walls appeared in caves thousands of years ago. Later the Ancient Romans and Greeks wrote their names and protest poems on buildings. Modern graffiti seems to have appeared in Philadelphia in the early 1960s, and by the late sixties it had reached New York. The new art form really took off in the 1970s, when people began writing their names, or 'tags', on buildings all over the city. In the mid seventies it was sometimes hard to see out of a subway car window, because the trains were completely covered in spray paintings known as 'masterpieces'.

In the early days, the 'taggers' were part of street gangs who were concerned with marking their territory. They worked in groups called 'crews', and called what they did 'writing' – the term 'graffiti' was first used by *The New York Times* and the novelist Norman Mailer. Art galleries in New York began buying graffiti in the early seventies. But at the same time that it began to be regarded as an art form, John Lindsay, the then mayor of New York, declared the first war on graffiti. By the 1980s it became much harder to write on subway trains without being caught, and instead many of the more established graffiti artists began using roofs of buildings or canvases.

The debate over whether graffiti is art or vandalism is still going on. Peter Vallone, a New York city councillor, thinks that graffiti done with permission can be art, but if it is on someone else's property it becomes a crime. 'I have a message for the graffiti vandals out there,' he said recently. 'Your freedom of expression ends where my property begins.' On the other hand, Felix, a member of the Berlin-based group Reclaim Your City, says that artists are reclaiming cities for the public from advertisers, and that graffiti represents freedom and makes cities more vibrant.

For decades graffiti has been a springboard to international fame for a few. Jean-Michel Basquiat began spraying on the street in the 1970s before becoming a respected artist in the '80s. The Frenchman Blek le Rat and the British artist Banksy have achieved international fame by producing complex works with stencils, often making political or humorous points. Works by Banksy have been sold for over £100,000. Graffiti is now sometimes big business.

2. Հետևյալ բարդությունները ներկայացնել ըստ առանձին տեսակների և ենթատեսակների.

Հարավ-արևելք, կաս-կարմիր, կենսաթրթիո, երկնամուխ, ուղղաձիգ, հորեղբայր, հացթուխ, մեկ-մեկ, ուս ուսի, աման-չաման, եփել-թափել, այստեղ, տասնհինգ, զուգել-զարդարել, գեներալ-լեյտենանտ, արագ-արագ, ծալել-ծալծլել, շանթարձակ, կարեվեր, հրթիռ, ԱԳՆ, հայ-անգլերեն, ուսանող-ուսանողուհի, այսօր, տուն առ տուն, ամեն ինչ, գիշեր-ցերեկ, հայրենասեր, ՖՖ, ըմբշամարտ, միջնադար, աղբյուր-հուշարձան, հորձանք տալ, ինքնաթիռ, արագ-արագ, ձեռք տալ, պար գալ, բուհ, հարյուր հազար քսանհինգ, թղթակից, ոչ ոք, ՅՈՒՆԵՍԿՕ, ՆԱՏՕ, փառք տալ, ամեն մի, առ ու ծախ, ձեռք ձեռքի, սարահարթ, ջրկիր, գրչատուփ:

3.Տրված բառերում ընդգծել ածանցները և բացատրել նրանց բառակազմական, ձևակազմական արժեքը՝ հիշելով, որ ածանցները բառաստեղծական ձևային են՝

ա/իմաստափոխական-բառակազմական /փոխվում է հիմք-միավորի բառական իմաստը, բայց չի փոխվում խոսքիմասային ընդհանուր իմաստը՝ հուշ-հուշարար/.

բ/իմաստահավելական /իմաստային նոր երանգ են հաղորդում՝ չփոխելով հիմք-միավորի բառական և խոսքիմասային ընդհանուր իմաստը՝ տուն-տնակ/.

գ/իմաստական-փոխանցական /փոխվում են հիմք-միավորի և՛ բառական, և՛ խոսքիմասային ընդհանուր իմաստը՝ մեծ-մեծություն/:

Ոսկի-ոսկեղեն, բարձր-բարձրություն, դուռ-դռնակ, ձագ-ձագուկ, մութ-մթին, Երևան-երևանյան, հերոս-հերոսաբար, դպրոց-դպրոցական, գույն-անգույն, ձև-ձևավոր, մաս-մասնիկ, բժիշկ-բժշկուհի, բախտ-դժբախտ, արքա-արքայական, կանաչ-կանաչավուն, երգ-երգիչ, տարր-տարրական, մրուր-մրրիկ, շարժ-շարժուն, անուն-հարանուն, ծաղիկ-ծաղկաստան, բայ-բայական, ուշ-ապուշ, բարի-բարություն, փոքր-փոքրանալ, պատում-պատմություն, ուսուցիչ-ուսուցչանոց, մարգարե-մարգարեություն, արտադրողական-անարտադրողական, գիր-գրական, սար-սարվոր, նիշ-հոմանիշ, ածանց-նախածանց, գիրք-գրային, մանուկ-մանկական, սար-սարվոր, բախտ-դժբախտ, անուն-հարանուն:

4. 5-ական այնպիսի բառազույգեր գրել, որոնք ունեն նույն արմատը, տարբեր ածանցներ, բայց՝

ա/նախածանցը հոմանիշ է նախածանցին /անբախտ-դժբախտ/
բ/նախածանցը հոմանիշ է վերջածանցին /անպուչ-պուչատ/
գ/ վերջածանցը հոմանիշ է վերջածանցին /տնական-տնային/

5.Նույնարմատ բառեր կազմել տրված ածանցազույգերով:

ա/ան/ապ-, ան/ տ-, -ային/եղեն, -/ա/վոր/-եղ, -մունք/-ք, -ավոր/-
ուն, -ավոր/-ենի, -ական/-ենի, -անք/-ք, -ական/ -ային, ներ-/բաց-,
ավետ/ան-, ստոր-/վեր-:

6.Նշել ընդհանուր բաղադրիչների բառակազմական արժեքը:

1.Ամենագորեղ, ամենագետ, ամենակարող, ամենանուրբ

2.Շաղել, շաղկապ, շաղոտ,

3.Պարուրել, պարփակել, պարբերույթ

4. Հարել, հարուցիչ, ապշահար, հարանուն
5. Պես-պես, մեծապես, որպես, այսպես
6. Դերակատար, դերանուն, դերբայ
7. Բացիչ, բացբերան, բացասել, բացակա
8. Նավթագործ, գործիչ, գործադիր, պանրագործ, ասեղնագործ
9. Մանուշակագույն, նարնջագույն, մեծագույն, հզորագույն
10. Արարիչ, կազմարար, հուշարար, արարում
11. Ներարկել, առարկել, ձեռնարկ, գլխարկ
12. Կորնթարդ, գմբեթարդ, խորանարդ, զարդ, արդուկել

7. Տեքստից առանձնացնել բաղադրյալ բառերը և խմբավորել ըստ ածանցավոր, բարդ/համադրական, հարադրական/, բարդ ածանցավոր տեսակների:

Հայր

Ա.Արդյոք մի բան հասկանում եք հայից: Որքա՛ն տարօրինակ, հանելուկային արարած, որքա՛ն խաբուսիկ: Երևու՛յթը, ո՛չ ինքը: Բայց և ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Ձուտ աշխատանք: Որոնում ես իր ինքնությունը, գտնում, բայց և իսկույն տեսնում ես, որ դա էլ նորից երևույթ էր: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում՝ նկարես: Թվով գրեթե ամենափոքրն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստն ի՛ր երկրի դիրքն է, ինքը ամենի՞ց համառ կառչեց նրան: Որքա՛ն անհույս էր թվում իր ապագան, բայց և որքա՛ն հուսացող է նա: Իր կյանքում նա երկու բան չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ՝ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի՜ հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է:

Ահա նայի՛ր այս բեռնակրին: Ի՞նչ է սա: Մեջքին մի սար բեռ՝ ճկվում է, մեջքը կոտրում: Որքա՛ն ուժ, որքա՛ն աշխատասիրություն: Ինչ է թե մի փոքրիկ գումար հավաքի, գնա, խանութ բաց անի:

Մարդն իր հացի և իր գործի տերն է ուզում լինել և ոչ թե սրա-նրա ծառան: Եվ արդեն հայ՝ նշանակում է տեր:

Տեսե՞լ եք նրա բնակարանը՝ խլուրդի ծակում: Բայց անցի՛ր նրա երկրով...Ի՛նչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր: Հավատալ կարելի՞ է, թե ինքն է շինել այդ բոլորը: Լցել է իր երկիրը եկեղեցիներով, բայց տարին մի անգամ էլ չի մտնում աղոթելու, աղոթք չի անում առօրյա կյանքում, բայց այդ չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերի՛ց թռավ աղոթքի ամենաբաձր թռիչքն առ Աստված...

Տանել չի կարողանում ծես, ձև, աստիճան, քաղաքավարություն: Ռամիկ է գերազանցապես: Քաղաքականության մեջ բանում է շատ հոգածու՝ անկեղծ լինել: Այնքա՛ն անկեղծ է ու միամիտ, որ կասկածելի խորամանկի և կեղծավորի տպավորություն է թողնում:

Խենթ ու խոնարհ է իր Սասունցի Դավթի նման և նրա պես անսպասելի ըմբոստ, հարվածող: Երբ վրա է հասնում գերագույն վտանգը, հերոսանում է հանկարծ և ծառանում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյի՛ր և կկոդոպտվի, բայց և առհասարակ ինքն է բարեկամ քեզ, իսկ քո բարեկամությունը վանում է: Տաղանդ է իր դեմ ատելություն ստեղծելու: Ուրիշի հաջողության մեջ նախանձոտ է: Եթե գժտվեց մեկի հետ, ոխակալ է ինչպես ուղտ: Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ: Սա նրա անհրաժեշտությունն է: Անկարգ է և անիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության, թե՛ գաղափարների մեջ:

Ուր հեղափոխություն, այնտեղ՝ հայություն: Ծայրահեղական է: Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսավ, բայց չխրատվեց:

Հայի ամենամեծ առաքինությունն էս ուզում. Ամենաներողամիտ ցեղը աշխարհիս վրա: Չի ուզում, որ իրեն դիպչեն, մոտենան, սիրեն թեկուզ: Նա մեկուսի է, բարի և ազատասեր:

Ինձ թվում է, թե մի շատ մեծ վիրավորանք կա հայի սրտի խորքում թաքնված, և դա այն արծվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թպրտում է, ընկնում քարի, աղբի մեջ, կեղտոտվում, թները կոտրում: Կերակուր ես մեկնում՝ չի ուզում: Չի սիրում ո՛չ ստրկություն, ո՛չ երջանկություն, գերադասում է տառապանք և ազատություն: Մաղձոտ է, բայց չունի գծուծ աստվություն, որ բարձր լեռներին անձանոթ զգացում է: Գերի արծվի խոր վիշտն է իր սրտի մեջ: Սա Հայկն է, որին գրկել են իր կյանքի միակ պայմանից՝ ազատությունից: «Ոչինչ չեմ ուզում ձեզնից, - ասում է նա իր նեղիչներին, - ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, գնացե՛ք, ապրեցե՛ք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը՝ Ազատությունը »: (ԴԴ)

Բ. Огонь

Никто точно не знает, когда впервые овладел человек огнём. Может быть, молния зажгла дерево возле его первобытного жилья? Или горячая лава, извергнутая на заре человечества вулканом, навела наших давних предков на первую мысль об огне?

Но огонь уже давно был нужен человеку. И ведь не даром одно из самых прекрасных и гордых сказаний древности посвящено тому, кто открыл для человека оберегаемую богами тайну огня. То был, как говорится в легенде, бесстрашный и независимый Прометей. Он сам происходил из семьи богов-небожителей, но, вопреки их строгому запрету, принёс огонь жителям земли — людям. Разгневанные боги низринули Прометея на землю и обрекли его на вечные муки.

С незапамятных времен огонь стал постоянным верным признаком человека. Путник, застигнутый ночью в дороге, увидев вдали огонь, наверняка знал: там люди!

Огонь был нужен человеку для света, для силы: он озарял и обогревал жильё, помогал готовить пищу. А потом человек научился использовать его тепло, чтобы добыть из воды могучий пар,двигающий машины.

Издавна огонь считался призывным знаком радушия и дружбы. Огонь отпугивал зверя от человеческого жилья, но звал человека к человеку. И до сих пор говорят люди, приглашая в гости: «Заходи на огонёк!»

Но, как и многие другие блага, которые добыл для себя, взяв у природы, человек, добрый огонь стал злом и бедой для многих. Огнём завладели жадные, хищные люди, заставившие других отдавать им все свои силы. Огонь породил оружие, которое так и стало называться огнестрельным. (ЛК)

Ч. Are celebrities bad for you?

Celebrities are everywhere nowadays: on TV, in magazines, online. Is this preoccupation with famous people harmless fun or is it bad for us? How many people are truly obsessed with modern media idols? And on the other side of the coin, can fame be harmful to the celebrities?

Studies suggest that the vast majority of teenagers do not really worship celebrities. Researchers have identified three kinds of fans. About 15% of young people have an 'entertainment-social' interest. They love chatting about their favourite celebrities with friends and this does not appear to do any harm.

Another 5% feel that they have an 'intense-personal' relationship with a celebrity. Sometimes they see them as their soulmate and find that they are often thinking about them, even when they don't want to. These people are more at risk from depression and anxiety. If girls in this group

idolise a female star with a body they consider to be perfect, they are more likely to be unhappy with their own bodies.

That leaves 2% of young people with a 'borderline-pathological' interest. They might say, for example, they would spend several thousand pounds on a paper plate the celebrity had used, or that they would do something illegal if the celebrity asked them to. These people are in most danger of being seriously disturbed.

What about the celebrities themselves? A study in the USA tried to measure narcissism or extreme self-centredness, when feelings of worthlessness and invisibility are compensated for by turning into the opposite: excessive showing off. Researchers looked at 200 celebrities, 200 young adults with Masters in Business Administration (a group known for being narcissistic) and a nationally representative sample using the same questionnaire. As was expected, the celebrities were significantly more narcissistic than the MBAs and both groups were a lot more narcissistic than the general population.

Four kinds of celebrity were included in the sample. The most narcissistic were the ones who had become famous through reality TV shows – they scored highest on vanity and willingness to exploit other people. Next came comedians, who scored highest on exhibitionism and feelings of superiority. Then came actors, and the least narcissistic were musicians. One interesting result was that there was no connection between narcissism and the length of time the celebrity had been famous. This means that becoming famous probably did not make the celebrities narcissistic – they already were beforehand.

So, what can we learn from this? People who are very successful or famous tend to be narcissists and are liable to be ruthless, self-seeking

workaholics. As we can see from celebrity magazines, they are also often desperate and lonely. They make disastrous role models

8. Տրված բառերով կազմել բարդություններ և խմբավորել ըստ կապակցման միջոցի

Նուրբ, գետ, ծով, սար, զրույց, լայն, ցավ, արջ, կին, հույզ, մատյան, ժպիտ, դուռ, քույր, մայր, սեղան, լեռ, բևեռ, ծայր, օր, պատուհան, աթոռ, տուն, գյուղ, ծաղիկ, հաշիվ, հաց, եղբայր, երգ, դուռ, գետ:

9. Լրացնել՝

ա/ հարադրական բարդություն-տերմինների շարքը՝ բետտամասնիկ, որոշիչ-որոշյալ...

բ/բայական հարադրությունների շարքը՝ պար գալ, ման գալ...

գ/անվանական հարադրությունների շարքը՝ ամեն մի, ոչ մի...

դ/գուգադրական բարդությունների շարքը՝ մսուր-մանկապարտեզ, դիմում-բողոք...

ե/կրկնավոր բարդությունների շարքը՝ գույն-գույն, մաս-մաքուր...

10. Կազմել 3-ական բաղիյուսկան բարդություն հետևյալ կաղապարներով՝

ա/միավանկ բառ+ու+միավանկ բառ /հալ ու մաշ/

բ/միավանկ բառ+ու+երկվանկ բառ /դուռ ու դրկից/

գ/միավանկ բառ +ու+եռավանկ բառ /խաղք ու խայտառակ/

դ/երկվանկ բառ +ու+միավանկ բառ /արոտ ու քար/

ե/երկվանկ բառ+ու +երկվանկ բառ /աղի ու լեղի/

11. Տրված բառակապակցությունները վերածել հապավական բարդությունների:

Բնակարանային վարձ, գիտական աշխատող, խնայողական բանկ, զինվորական ուժ, ժողովրդական թատրոն, զինվորական կոմիսար, հրամանատարական կազմ, արտաքին գործերի նախարար, սոցիալական ապահովագրություն, բուժական անձնակզմ, քաղաքական բանտարկյալ, ջերմային էլեկտրական կայան, բարձրագույն ուսումնական հաստատություն, ատոմային էլեկտրական կայան, Միավորված ազգերի կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ:

12. Որոշել սերող և բաղադրող հիմքերը, նրանցում ընդգրկված հիմնական ձևույթների տեսակները՝ մաքուր, հնչյունափոխված, ձևավոր: Կաղապարները ներկայացնել բանաձևերով:

Կենսաբեր, նվիրաբերել, սրտամոտ, օրենսգետ, շիկահեր, ծխամորճ, գլխահակ, կրծոսկր, մատենագիր, մրիկ, մրրիկ, հուզառատ, մշտաժպիտ, ձվաձև, արնագույն, ընձուղտ, բքախեղդ, կապտականաչ, հրազեն, ձնեմարդ, գարնանային, առնական, ատաղձագործ, հորական, ընչացք, ընչաքաղց, բնագործեն, լուսաբանել, բծախնդիր, գնացք, ասացվածք, հորեղբայր, մեծահոջակ, բանախոս, լծակից, ուրախալի, անտունի, արձանանալ, անգուգական, կենսաբան, աշնանամուտ:

13. Կազմել 3-ական ածանցավոր բառ հետևյալ մասնակաղապարներով:

1. Գոյականական հիմք+գոյականակերտ ածանց
2. Գոյականական հիմք+ածականակերտ ածանց
3. Գոյականական հիմք+մակբայակերտ ածանց
4. Ածականական հիմք+ածականակերտ ածանց
5. Ածականական հիմք+մակբայակերտ ածանց
6. Թվականական հիմք+մակբայակերտ ածանց

- 7.Մակբայական հիմք+ածականակերտ ածանց
- 8.Բայահիմք+ածականակերտ ածանց
- 9.Բայահիմք+գոյականակերտ ածանց

14. Կազմել 3-ական իսկական բարդություն հետևյալ կադապարներով: Կապակցումը կարող է լինել հոդակապով կամ առանց հոդակապի:

- 1.Գոյական+գոյական
- 2.Գոյական +ածական
- 3.Անորոշ դերբայ+ գոյական
- 4.Ածական+բայարմատ
- 5.Մակբայ+բայարմատ
- 6.Դերանուն+գոյական
- 7.Գոյական+բայարմատ
- 8.Բայարմատ+գոյական
- 9.Ածական+գոյական
- 10.Ածական+ածական

15. Կազմել բառեր՝ ըստ տրված բառակազմական կադապարների:

- 1.Արմատ+արմատ+ածանց
- 2.Արմատ+արմատ+ածանց+ածանց
- 3.Արմատ+արմատ+արմատ+ածանց
- 4.Արմատ+ածանց+արմատ
- 5.Արմատ+ածանց+արմատ+ածանց
- 6.Արմատ+ածանց+արմատ+ածանց+ածանց

16. Կազմել բարդություններ հետևյալ մասնակադապարներով՝

1. Մերող հիմք+բաղադրող հիմք

2. Սերոդ հիմք+ա+բաղադրող հիմք
3. Սերոդ հիմք+ե/ի+ա/+բաղադրող հիմք
4. Սերոդ հիմք+յ+բաղադրող հիմք
5. Սերոդ հիմք+յ+ա+բաղադրող հիմք
6. Սերոդ հիմք+ն+բաղադրող հիմք
7. Սերոդ հիմք+ն+ա+բաղադրող հիմք
8. Սերոդ հիմք+յ+բաղադրող հիմք

17. Կազմել բառեր հետևյալ կառուցվածքային բանաձևերով՝

1. $S_jS, S_jS, S_j(Ss), S_j(Sa), S_j(S^2s)$
2. $S_j(Sss), S_j(Ss), S_j(S_jSa), S_j(Ssa), S_j(Ss)$
3. $(S^2j)Sa, S_j(S_jSa), S_j(S^2as), S_j(SSs)$
4. $SS, S(SS), (SS)S, S(Ss), S_j(S_jSa)$
5. $S(Sa), S(Saa), S(S_jSa), S(Sa)$
6. $sS, aS, s(Ss), sj(Ss), s(sjS),$
7. $Ss, S^fs, (Ss)s, (Ssss)s, S(Saa), S(Saa)$
8. $(SS)s, (S^fS)s, (SS^f)s, (SS)s, (S_jS)s$
9. $(S_jS)s (S_jS^f)s, (S_jS)ss, S_j(Ssa)$

18. Առանձնացնել հետևյալ բառերի՝

1. սերոդ և բաղադրող հիմքերը,

2. բառաբարդման և ածանցման կաղապարները և ներկայացնել դրանք բանաձևերով:

Ա. Միջբաղադրային, մարդասիրություն, դպրոցամերձ, նյութատեխնիկական, արծաթաջուր, քարակույտ, մաքրասեր, որդեկություն, այգեկութ, մետաղաձուլարան, գոյականակերտ, ոսկեվագ, գյուղատնտեսություն, մետաղադրամ, հացթուխ, հողմածեծ, անտուն, գերհզոր, լարային, միջանկյալ, միջազգային, մինչհեղափոխական, հականիշային, ենթամշակույթ, նվագագույն, անպարագիծ,

քաղաքային, երկերեսանիություն, հոմանիշ, լուսավորականություն, չկամ, այլազգի, հոգևոր, տնական, իմացություն, բարիդրացիական, գիտական, մերձնուկուլյան, հիմք, սահմանային, գերլարում, դատաիրավական, դժգույն:

Բ. Златокрылый, хладнокровный, безоблачный, книголюб, междугородний, сознание, ежедневный, косоглазие, верхолаз, снегоход, музыковед, властолюбивый, освещение, противовирусный, равноценный, малейший, межнациональный, приграничный, солнцезащитный, хранилище, излучение, кофеварка, бездомный, сверхмощный, кровеносный, величайший, доисторический, противостояние, пришкольный, хлебопек, полугодичный, водопад, межстрочный, правдоподобный.

Գ. Unavoidable, possibility, sinkable, provision, dissimilarity, effortless, dependent, unbelievable, kindness, permission, schoolboy, colourful, cruelty, unimportant, snowball, discovery, happiness, occupier, referee, freshman, enlarge, overheat, agriculture, fulfill, recollect, subtitles, intellectual, sailor, relationship, railway, bluebell, marriage, stomachache, conversation, astonishment, saleswoman, relative, handkerchief, generation, postwar, disagreement, respectful, undertake, consideration, headquarters, bucketful, musician.

Բ. ԻՄԱՍՏՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄԱՍՏՍԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է ուսումնասիրում իմաստաբանությունը:
2. Ըստ իրենց արտահայտած ընդհանուր իմաստի ի՞նչ խմբերի են բաժանվում բառերը:
3. Ի՞նչ է բնիմաստը և ի՞նչ կապի մեջ է բառի ներքին ձևի հետ:
4. Ո՞ր բառերն են կոչվում մենիմաստ:
5. Ի՞նչ է բառի բազմիմաստությունը: Ինչու՞ բազմիմաստությունն ավելի տարածված երևույթ է, քան մենիմաստությունը:
6. Ո՞րն է խոսքի և խոսելու իրադրության դերը բառի բազմիմաստության դրսևորման մեջ: Բացատրությունները հիմնավորել փաստերով:
7. Ի՞նչ է իմաստափոխությունը, որոնք են նրա տեսակները: Ի՞նչ հիմունքներով կարող է տեղի ունենալ իմաստափոխություն:
8. Ի՞նչ փոփոխություններ կարող է առաջ բերել բառիմաստի պատմական զարգացումը:
9. Ի՞նչ է փոխանունությունը:
10. Ի՞նչ է համըմբոնումը:
11. Ի՞նչ խմբերի են բաժանվում բառերն ըստ ձևաիմաստային փոխհարաբերության:
12. Ո՞ր բառերն են կոչվում համանիշներ:
13. Ինչո՞ւ են տարբերվում իմաստային և ոճական համանիշները:
14. Ի՞նչ է համանիշային շարքը: Բացատրել նրա յուրահատկությունները:
15. Ո՞րն է համանիշների դերը լեզվի մեջ: Ինչպե՞ս են գործածվում խոսքում:
16. Ի՞նչ է նույնանիշությունը:
17. Ինչպե՞ս են առաջանում նույնանիշները:

18. Ինչո՞ւ նույնանիշները քիչ են լեզվի մեջ: Ինչո՞վ բացատրել, որ նույնանիշների շարքերը սակավաբառ են:

19. Ինչպե՞ս են առաջանում նույնանիշները:

20. Ո՞ր բառերն են կոչվում համանուններ:

21. Ինչպե՞ս են առաջանում համանունները:

22. Ի՞նչ խմբերի են բաժանվում համանունները և ի՞նչ հիմունքներով:

23. Ինչպե՞ս պետք է գործածել համանունները, որպեսզի նրանց իմաստը ճիշտ հասկացվի:

24. Ի՞նչ հարաբերության մեջ են բազմիմաստ բառերը համանունների հետ:

25. Ի՞նչ է հականիշը, ո՞րն է նրա դերը:

26. Հականիշների շարքերը ո՞ր խոսքի մասերով են շատ արտահայտվում և ինչո՞ւ:

27. Քանի՞ տեսակ են լինում հականիշների շարքերը ըստ կազմության: Ինչպե՞ս են կազմվում նույնարմատ հականիշները:

28. Ի՞նչ են նույնարմատ և լեզվական հականիշները: Ի՞նչ է հակադրույթը, ի՞նչ է օքսիմորոնը, ինչո՞վ են տարբերվում իրարից:

29. Ինչպիսի՞ն է հականիշության կապը բազմիմաստության հետ:

30. Ի՞նչ է հարանունը, ի՞նչ տեսակներ են առանձնացվում նրա համար:

Գործնական առաջադրանքներ

1. Առանձնացնել՝ ա) այն բառերը, որոնք նյութական իմաստ ունեն, բ) այն բառերը, որոնք արտահայտում են հասկացությունների հետ կապված հարաբերություններ, գ) այն բառերը, որոնք վերաբերմունք են արտահայտում հասկացությունների նկատմամբ:

Ա. Առաջին հայր, որ գլխին թագ է դրել, եղել է Արամը: Քերթո-
ղահայր Մովսես Խորենացին հավաստում է, որ Հայաստանը՝
որպես պետություն, Արամ թագավորի օրոք է արժանացել միջազ-
գային ճանաչման: Նրա կնոջ՝ Սոսեմի մասին տեղեկություններ
չկան: Բայց այն փաստը, որ նա ծնել է հին աշխարհի ամենագեղեցիկ
սղամարդկանցից մեկին՝ Արա Գեղեցիկին, ամեն ինչ ասում է այդ
կնոջ մասին. նա սլացիկ էր, ինչպես եղեգնը, նրբագեղ՝ ինչպես
սոսին: Սոսեմի մարմարիոն դեմքը, շքեղաշուք շարժուձևը, դշխոյա-
կան կեցվածքը ապշեցնում էին ամենքին: Ասում են՝ սոսի ծառը
այդպես են կոչել՝ նմանացնելով Սոսեմին: Ավանդավեպն ասում էր
նաև, որ հայ օրիորդները փափագում էին գեթ մեկ անգամ
արժանանալ Սոսեմի հայացքին՝ համոզված լինելով, որ դրանից
իրենք ավելի կգեղեցկանան:

Բ. Лесные приметы

Чтобы не заблудиться в лесах, надо знать приметы. Находить
приметы или самим создавать их — очень увлекательное занятие.
Мир примет бесконечно разнообразен. Бывает очень радостно, когда
одна и та же примета сохраняется в лесах год за годом. Каждую осень
встречаешь все ту же зарубку, сделанную тобой на сосне. С каждым
летом зарубка все сильнее заплывает твердой золотистой смолой.

Приметы на дорогах — это не главные приметы. Настоящими
приметами считаются те, которые определяют погоду и время. Они
связаны со всем: с цветом неба, с росой и туманами, с криком птиц и
яркостью звездного неба.

В приметах заключено много точного знания и поэзии. Самая
простая примета — это дым костра. То он подымается столбом к небу,
спокойно струится вверх, выше самых высоких ив, то стелется
туманом по траве, то мечется вокруг огня. И вот к прелести ночного

костра, к горьковатому запаху дыма, треску сучьев, перебеганию огня и пушистому белому пеплу присоединяется еще и знание завтрашней погоды.

Глядя на дым, можно определенно сказать, будет ли завтра дождь, ветер или снова, как сегодня, солнце подыметесь в глубокой тишине, в синих прохладных туманах. Безветрие и теплоту предсказывает и вечерняя роса. Она бывает такой обильной, что даже блестит ночью, отражая свет звезд. И чем обильнее роса, тем жарче будет завтрашний день.

Это все очень несложные приметы. Но есть приметы сложные и точные. Иногда небо вдруг кажется очень высоким, а горизонт сжимается, кажется близким, до горизонта как будто не больше километра. Это признак будущей ясной погоды. (По К. Паустовскому.)

Ч. The history of zombies

Zombies are everywhere these days – on television, in movies and in books. The current image of the terrifying flesh-eating zombie comes from George Romero's 1968 classic film *Night of the Living Dead*. Nowadays many people like to frighten themselves with the idea of the 'Zombie Apocalypse', and enjoy learning how to destroy zombies by decapitation or shooting them in the head.

However zombies are not new. The term, from the Kongo word *nzambi* which means 'spirit of a dead person', has been long associated with the Vodou religion of Haiti (popularly known as Voodoo). As with West African Vodun, from which it is descended, Vodou has strong ties to the supernatural and magic practised by witch doctors called *bokors*.

In Haitian culture zombies are not evil creatures but victims. They are said to be people who have been killed by poisoning, then reanimated and controlled by *bokors* with magic potions for some specific purpose, usually to work as slave labour. The *bokors* were widely feared and respected. It is said that they used to be in the service of the secret police and those who defied the authorities were threatened with being turned into the living dead.

For a long time most people assumed that zombies were nothing more than mythical figures, like werewolves and vampires. However this changed in the 1980s when a man called Clairvius Narcisse claimed that he had been turned into a zombie by means of drugs and forced to work on a sugar plantation for two years before escaping. Wade Davis, a Harvard scientist, investigated the claim and obtained something called 'zombie powder' from Haitian *bokors*. The main active ingredient was a neurotoxin found in puffer fish which could be used to simulate death. The *bokors* also explained to Davis that a second poison, made from the *datura* plant, known as the zombie cucumber, was given to victims after they were revived from their death-like state. This kept the 'zombies' in a submissive state so that it was easy to force them to work. Davis wrote several books on the topic, including *The Serpent and the Rainbow*, later made into a horror film by director Wes Craven.

Although the book was very popular with the public, some scientists were sceptical of Davis's claims. They said the amounts of toxin in the powder samples he found were inconsistent and not high enough to produce zombifying effects. Although many people in Haiti still believe in zombies, there have been no publicised cases in the last few decades and Davis's theory remains controversial. The Zombie Apocalypse seems unlikely to take place soon.

2.Առանձնացնել մենիմաստ և բազմիմաստ բառերը: Կազմել նախադասություններ բազմիմաստ բառերի տարբեր իմաստներով:

Ա. Աղբյուր, աշխատանք, աստղ, լեզու, ֆիզիկա, լույս, բացահայտիչ, մաքրել, խնդիր, ֆոսֆոր, վանկ, հասնել, աստիճան, ածուխ, քիմիա, դուռ, անցնել, ծով, կարգ, ջուր, նստել, հաճույք, հնգասահ, դասամիջոց, սոսիս, գրապահարան, քար, տուն, գլուխ, ձեռք:

Բ. Игла, море, взрыв, шляпка, автобус, рукав, давление, гром, хвост, слух, ножка, нос, язык, свет, торт, степь, искра, береза, источник, гребень, кисть, бинокль, лампа, предложение, брюки, работа, ромашка, галерея, страница, хозяин.

Գ. Iron, sentence, mathematics, plane, matter, light, know, house, arrive, scissors, tongue, break, flight, museum, back, police, work, fire, phone, pleasure, sky, source, ward, grade, smart, copper, rose, text, point, noun, live, mood, music, capital, people, view, land, meat.

3. Փոխաբերական ի՞նչ իմաստներ ունեն հետևյալ բառերը:

Ա. Նապաստակ, շուն, աղավնի, էշ, աղյուծ, արծիվ, ագռավ, աղվես, խոզ, եղնիկ, մուկ, բու, բորենի, ճնճղուկ, ծիծեռնակ, թուրթակ:

Բ. Ворона, медведь, заяц, змея, конюшня, курица, тряпка, лиса, стрекоза, шляпа, щенок, обезьяна, голова, рыба.

Գ. Chameleon, eagle, rat, snake, peacock, turtle, owl, lion, cheetah, bat, donkey, fox, pig, lamb, parrot, wolf, tiger, chicken, raven,

4. Հետևյալ բառերով կազմել նախադասություններ՝ նկատի ունենալով նրանց ուղիղ և փոխաբերական իմաստները:

ա) Թև, սառը, գլուխ, սիրտ, ծաղիկ, երես, արծիվ, մայր, երկաթե

բ) Рука, розовый, хлеб, туча, пробка, урок, тяжелый, черный, снять, глубокий, разжечь, поднять

գ) Order, fellow, party, man, bring, valley, hard

5. Բացատրել ընդգծված բառերի իմաստները և որոշել, թե ինչ ընդհանրություն կա նույն բառի տարբեր իմաստների միջև:

1. Փողոցի լույսերը վառվեցին: Արդեն լույս է, պետք է վեր կենալ: Լույսի փողը պետք է մոծել ժամանակին: Լուսնի լույսի տակ էլ էր աշխատում: Գիտությունը լույս է: Լույսի առջև կանգնելով՝ մութ էր անում: Ճշմարտության լույսով մենք հաղթանակի կհասնենք: Լույս և ազատություն ժողովրդին: Նրա լույս երեսին հանգստություն իջավ:

Ծաղիկների բույրը տարածվել էր սենյակում: Նա կուրսի ծաղիկն է: Ծաղիկ հասակում նա հեռացավ կյանքից: Դրանք նրա երկարատև աշխատանքի ծաղիկներն են: Պտույտ է գալիս ծաղիկ տիրուհին: Երկու ծաղիկները նոր կյանք կսկսեն:

6. Պարզաբանել *ծածկել* բառի նշանակությունները և նրբերանգները հետևյալ կապակցություններում:

Շենքը ծածկել, գլուխը ծածկել, դուռը ծածկել, խավարը ծածկել, ձյունը ծածկել է գետինը, երեսը ծածկել շպարով, պաուհանը ծածկել բոլորից, վիշտը ծածկել, խայտառակությունը ծածկել, աղմուկը ծածկեց ձայնը:

7. Կազմել նախադասություններ, որոնցում լինեն փոխանունություն, համըմբոնման օրինակներ:

8. Գտնել փոխաբերությունները, նշել, թե ինչի վրա են դրանք հիմնված:

Աշխարհիս մեջ ես էլ մի օր կանցնեմ անդարձ ու կերթամ:
 Ետ չեմ նայի, չեմ պահանջի ես փառք ու վարձ ու կերթամ:
 Աշուղ Սայաթ-Նովի նման ես էն գլխեն իմացա,
 Որ աշխարհում փուչ է ամեն երազ ու լաց, ու կերթամ:
 Էն էլ, որ ես իմ վառ սրտով ու կարոտով սիրեցի,
 Քամուն կտամ, կմոռանամ, կմոռանամ ամեն մի հարց ու կերթամ:
 Կյանքիս նման հեռու՝ մարդիկ, անանուն ու անձանոթ,
 Ձեզ կթողնեմ երգերս այս՝ կյանքս երազ՝ ու կերթամ: (ԵՉ)

Բ. Морская волна – волна недовольства, лисий хвост – хвост ракеты, нос в веснушках – нос корабля, модная шляпка – шляпка гриба, золотая цепь – цепь событий, страницы книги – страницы жизни, взрыв бомбы – взрыв чувств, фундамент здания – фундамент знаний, сооружение памятника — монументальное сооружение, кольцо с бриллиантом – кольцо блокады, обливаться водой – обливаться потом радушный хозяин – хозяин положения, ловить рыбу – ловить момент, победить врага – победить страх, издание книги - иллюстрированное издание, остановка движения — автобусная остановка.

Գ. The Raven

Deep into that darkness peering,
 Long I stood there, wondering, fearing,
 Doubting, dreaming dreams no mortals
 Ever dared to dream before;
 But the silence was unbroken,
 And the stillness gave no token,
 And the only word there spoken
 Was the whispered word, "Lenore!"
 This I whispered, and an echo
 Murmured back the word, "Lenore!"

Merely this, and nothing more.(E.P.)

9.Օգտվելով բացատրական բառարանից՝ ներկայացնել հետևյալ բառերի տարբեր իմաստները և որոշել, իմաստափոխության հիմունքը:

Լսել, ճյուղ, հասակ, լուծ, հաց, կոտրվել, դեղ, կապել, խնձոր, ծանր, դասարան, դեմք, հավ, պարապ:

10. Գրել հինգ բազմիմաստ բառ, դրանցով կազմել բառակապակցություններ՝ ուղիղ և փոխաբերական իմաստներով:

11. Գտնել հետևյալ բազմիմաստ բառերի նշանակությունները գրաբարում: Այդ իմաստներից որոշնք են այժմ գործածական:

Դպիր, դպրություն, պար, բակ, քող, շարագիր, բան, դաս, խեցի, արվեստ, խորիս, խորթ, սպանդ, սպրդել, քերել, թափ:

12.Գրել տասական այնպիսի բառեր,

ա) որոնց հիմնական իմաստը անփոփոխ է մնացել հայոց լեզվի պատմության բոլոր շրջաններում,

բ) որոնք գործածվել են միայն գրաբարում կամ միայն միջին հայերենում,

գ) որոնց բառիմաստը փոխվել է (նեղացել կամ ընդլայնվել),

դ) որոնք՝ իբրև անկախ արմատներ, դուրս են եկել գործածությունից, բայց պահպանվել են բարդություններում,

ե) որոնք, լինելով ծագումնաբանական ընդհանրություն հայերենում, ռուսերենում, անգլերենում, փոփոխություն են կրել կա՛մ արտահայտության, կա՛մ բովանդակության դիտվածքներում:

13. Գրել տրված բառերի համանիշները և կազմել դրանց հականիշների համանիշային շարքերը:

Ա. 1. Արի, երերուն, թանձր, թերի, աղքատ, ժխտել, ծածուկ, ժամանակավոր, գեղեցիկ

2. Նպաստել, հարատև, միատեսակ, հիմնել, շնորհավի, պարկեշտ, կուտակել, կարծր, դաժան

3. Արշալույս, գորեղ, թաց, թյուր, ակնհայտ, աչառու, խինդ, մեղմ, հսկայական

Բ. 1. Друг, медленно, темнота, навсегда, победа, отвратительный, печаль, роскошный, редкий.

2. Скупой, дорожить, смеяться, смелость, талантливый, умный, щедрый, нищий, знойный.

3. Потеря, старый, веселый, глупый, нужный, боязливый, жадный, разрушать, включить, радовать, презирать.

Գ. 1. Brave, enemy, obvious, terrible, kind, smart, frequently, famous, friendly, timeless, wet

2. Gorgeous, stupid, greedy, merry, laugh, light, lively, hot, wealthy, various, recognize, defend

3. Ancient, ignore, happy, destroy, postpone, land, sunrise, experience, advice, amazing, gain

14. Տրված բառակապակցությունների ընդհանուր բաղադրիչը փոխարինել համանիշներով:

Ա. 1. Կարճ ժամանակ, կարճ մարդ, կարճ ուղևորություն, կարճ շարադրանք

2. Խիստ ձմեռ, խիստ խոսք, խիստ կարևոր, խիստ մարդ

3. Թեթև աշխատանք, թեթև հարված, թեթև սնունդ, թեթև աղջիկ

4. Ծանր օդ, ծանր կերակուր, ծանր մեղադրանք, ծանր լուրջություն, ծանր լսողություն

5. Ողորմելի մարդ, ողորմելի գումար
6. Կնճռոտ դեմք, կնճռոտ հարց
7. Լսել երաժշտություն, լսել ծնողներին, լսել նորություն
8. Կոտրել բաժակը, կոտրել մեկին, կոտրել ցավը
9. Չոր ձմեռ, չոր վերաբերմունք

Բ. 1. Свежая газета, свежий хлеб, свежие овощи, свежее белье, свежий ветер;

2. Суровая зима, суровый человек, суровые условия, суровый взгляд;

3. Легкая задача, легкий ветерок, легкая ноша, легкая походка, легкий перекус;

4. Глубокий колодец, глубокая рана, глубокие чувства, глубокий сон;

5. Высокий холм, высокое мнение, высокая оценка, высокие слова;

6. Богатый человек, богатая обстановка, богатая растительность, богатый урожай.

Գ. 1. Severe man, severe winter, severe impacts, severe attack.

2. Light opera, light bulb, light damage, light use.

3. Break the vow, break the vase, school break, break the silence.

4. Deep feelings, deep river, deep silence, deep changes.

5. Poor conditions, poor people, poor sight, poor knowledge.

6. Heavy rain, heavy traffic, heavy bag, heavy breathing.

15. Որոշել, թե փակագծերում տրված համանիշներից որն է ամենահարմարը տվյալ նախադասության մեջ և ինչու. համանիշներից ո՞րը կարելի է փոխարինել մյուսով. փոխարինելիս ե՞րբ է իմաստը սուժում և ինչու՞ :

ա) 1. Չար ու դաժան (հակառակորդը, ոսոխը, թշնամին, ախոյանը) գազանային հաշվեհարդար տեսավ խաղաղ բնակչության հետ: 2. Այս անգամ Կասպարովի (.....) էր մի երիտասարդ, բայց տաղանդավոր շախմատիստ: 3. 1941թ. հունիսի 22-ին ուխտադրուծ (.....) հարձակվեց մեր մեծ հայրենիքի վրա: Նա չուներ իր (.....) ուսանողության մեջ:

բ) 1. Մեր անտառներում կան վայրի մրգերի (անթիվ, անհամար, անսպառ, անհատնում, բազմաթիվ) տեսակներ: 2. Երկրի ընդերքում կա (.....) հարստություն: 3. Երկնքում բոցկլտում են (....) աստղեր: 4. Նա լի է (....) եռանդով: 5. Հրապարակը լցվել էր (...) մարդկանցով:

16. Կազմել նախադասություններ տարբեր համանիշներով՝ հաշվի առնելով նրանց ոճական երանգը:

Հասկանալ և գլխի ընկնել, հայտնել և իմաց տալ, համարձակվել և սիրտ առնել, թեքել և ծռել, ստեղծել և հորինել, պարեն և ուտելեղեն, շտապել և փութալ, մեռնել և հոգին փչել, գեղեցիկ և չնաշխարհիկ, առատ և արբշիռ, խենթ և խելառ:

17. Կազմել գոյականի, ածականի, բայի համանիշների երկուական շարք. շարքի սկզբում գրել հիմնաբառը, մյուս բառերը դասավորել ըստ գործածության հաճախականության:

18. Բացատրել այն տարբերությունը, որ կա հետևյալ համանիշային գույգերում:

Ա. Բարկություն-վրդովմունք, հեկեկալ-ողբալ, գեղեցիկ-սիրուն, ուտել-լափել, գաղթական-պանդուխտ, անգութ-քարսիրտ, վախկոտ-վեհերոտ, ապաստան-օթևան, ժրաջան-աշխատասեր, իհարկե-հարկավ, մերժում-հերքում, կասկած-տարակույս, նվիրել-

ընծայել, ահավոր-սուկալի, մեծ-խոշոր, ուրախ-զվարթ, այգաբաց-
լուսադեմ, հասկանալ-կոռահել, առողջանալ-լավանալ:

Բ. Мысль-идея, спать-ночевать, грусть-печаль, бой-битва, поэт-
стихотворец, горе-беда, профессия-специальность, автор-создатель,
храбрость-бесстрашие, удовольствие-радость, большой-громадный,
возражать-противоречить, рубашка-сорочка, сырой-влажный, жена-
супруга, молодость-юность, хлопать-аплодировать, инфекция-зараза.

Գ. Help-aid, language-tongue, freedom-liberty, begin-commence,
wide-broad, branch-twigg, dumb-mute, piece-bit, small-tiny, ask-inquire,
fight-combat, check-verify, lucky-fortunate, smart-intelligent, use-
consume, wrong-incorrect, need-request, go-depart, tell-inform, buy-
purchase.

**19.Որոշել հետևյալ համանունների տեսակները (լրիվ և
մասնակի) և բացատրել, թե մասնակի համանունների որ ձևերն են
համընկնում, որ ձևերը՝ ոչ:**

Ա. Գունդ և գունդ, կաթ և կաթ, աղային և աղային, հորդ և հորդ,
ակ և ակ, թոռ և թոռ, դար և դար, անցավ և անցավ, անձուկ և անձուկ,
աղոտ և աղոտ, հանդերձ և հանդերձ, ավել և ավել, լալ և լալ, սարդ
և սարդ, որթ և որդ:

Բ. Месяц-месяц, жгут-жгут, мой-мой, вина-вина, трем-трем,
нота-нота, лук-лук, болтать-болтать, дали-дали, свет-свет, наказать-
наказать, лавка-лавка, заставить-заставить, поднос-под нос, немой-не
мой, ключ-ключ, залезать-зализать.

Գ. Key-key, club-club, watch-watch, pupil-pupil, floor-floor, yard-yard, fast-fast, miss-miss, seal-seal, close-close, last-last, press-press, kind-kind, point-point, live-live, ward-ward, break-break, wipe-wipe.

20. Բազմիմաստություն, թե՛ համանունություն կա հետևյալ նախադասություններում: Պատասխանը հիմնավորել:

Ա. 1. Ընկերների շրջապատում նա անարգվում էր: Անարգել ներս մտավ ու սկսեց աջ ու ձախ բոլորին անարգել:

2. Մեկնում էր Մեսրոպ վարդապետը կլորիկ գրերի իմաստը: Ուշ գիշեր էր, երբ տուն էր մեկնում:

3. Նրա ցուցամատի վրա կար զմրուխտի մեծ ակով ոսկյա մատանի: Մեղվապահը բացեց փեթակի ակը: Ծերունին բացեց կանաչ աղբյուրի ակը:

Բ. В опытном хозяйстве вывели новый сорт картофеля. Пятно так и не удалось вывести. Разлившаяся река затопила все близлежащие дома. Затопила железную печку, и тепло разлилось по землянке.

Правая рука у него была сломана. Правое дело всегда победит. Правые партии образовали оппозицию.

Папа купил новый гаечный ключ. Среди гор течет ледяной прозрачный ключ.

Գ. He was travelling in the right direction. You have the right to remain silent. Mable was standing on the right side of the street.

This is a severe woman with straight hair. The country has a severe climate. The pollen causes severe allergic reactions.

It's very heavy baggage. He heard some pretty heavy news. Heavy taxes were laid.

21. Լրացնել հետևյալ առածները՝ կետերի փոխարեն գրելով հականիշներ:

Շատ մի ..., ... կա, շատ մի ..., ... կա:

Խոսքը ..., ջուրը՝ ...:

... խոսի՛ր, ... լսի՛ր:

Քամու ... քամին էլ ...:

... մի քար գցեց ծովը, հազար ... չկարողացան հանել:

... հարևանը լավ է, քան ... բարեկամը:

... նստենք, ... խոսենք:

Մինչև... բարակի, ... հոգին դուրս կգա:

22. Գտնել հականիշները և առանձնացնել հակադրություններն ու օքսիմորոնները, բացատրել դրանց ռճական նշանակությունը:

Մրոտ, ինչպես մի հին ճրագ,

Մաքուր, ինչպես մի արեգակ-

Մայրս:

Խղճուկ, ինչպես խրճիթը մեր,

Հզոր, ինչպես ջաղացքար-

Հայրս:

Հեռու, ինչպես Մասիսը խեղճ,

Մոտիկ, ինչպես Մասիսը պերճ-

Մայրս: (ՀՇ)

Ուր որ նայում եմ, քարե բարձունք է,

Քարե արցունք է, քարե ժպիտ,

Քարե սարսուտ է ու քարե սունկ է,

Քարե ծաղկունքի քնքշանքը բիրտ: (ՀՍ)

Մրսած մի տոթ կա օդում,

Լուռ մի որոտ կա օդում,
Ամպը շրթունք է արել,
Ամպրոպի հոտ կա օդում: (ՀՄ)

23. Բացատրել հետևյալ ձևախմբաստային հարանունների իմաստները և նրանցով կազմել նախադասություններ:

ա) Ավանդություն-ավանդույթ, այլասեռում-այլասերում, վերաբերել-վերաբերվել, երախտիք-երախտագիտություն, գործառություն-գործառնություն, զգացողություն-զգացում, զգուշություն-զգուշավորություն, լիակատար-լիիրավ:

բ) Խոստանալ-խոստովանել, ծրագրել-ծրագրավորել, կազմակերպական-կազմակերպչական, հազվագյուտ-հազվադեպ, հաղթել-հաղթանակել-հաղթահարել, հասկացողություն-հասկացություն, հավաքել-հավաքագրել:

գ) Հնար-հնարանք-հնարք, հրավեր-հրավերք, հրատարակություն-հրատարակչություն, հրատարակել-հրապարակել, նորություն-նորույթ, ոգեկոչել-ոգևորել, պաշտոնական-պաշտոնական, պարտավորություն-պարտականություն, տեղական-տեղային, տարբերել-տարբերակել, ցուցում-ցուցմունք, պահպանել-պաշտպանել:

24. Հետևյալ նախադասություններում կետերի փոխարեն տեղադրել համապատասխան հարանունը:

Ա. 1. Նիստում երկու կարևոր հարցեր էին ...: Բժիշկը... էր հիվանդին (քննել, քննարկել):

2. Թումանյանի ... սիրով եմ արտասանում: Բանաստեղծության առաջին ... ընթերցեց բարձր տրամադրությամբ: (քաղյակ, քառատող):

3. ... արդյունքները քաղաքագետներին հավասարակշռությունից հանել են: Նա ... շրջան անցավ գործարանում: (փորձարարական, փորձառական)

4. Աշխարհում դեռևս... հակամարտություններ կան: -Եթե նժույզը ... է, ուրեմն ազնիվ տեսակի է: (ցեղական, ցեղային)

5. Հարցի ... հիմնարկի ... է թողնվում: (տնօրինություն, տնօրենություն)

6. ... իշխանությունները չեն բավարարում մարդկանց պահանջները: ... հակամարտություններից տուժած երկրներ աշխարհում շատ կան: (տեղական, տեղային)

Բ. 1. Принять ... меры - стоять в ... позе (эффективный, эффектный).

2. ... свежий воздух - тихонько... (вдохнуть, вдохнуть).

3. ...боль - ...отношение (нетерпимый, нестерпимый).

4. Сообщить интересные... -важные ... развития растений (факторы, факты).

5. ... в кабинет - ... на вершину горы (войти, взойти).

6. ...свидетельство в отдел кадров - ...слово для выступления (предоставить, представить).

7. ... ребенка - ... кольцо на палец (одеть, надеть).

8. Концертный ... - ... телефонной сети (абонент, абонемент).

9. Трудный ... - ... правящей верхушки (диктат, диктант).

10. ... ювелир - ... мех на пальто (искусный, искусственный).

Գ. 1. I won't spend one.....on a bottle of perfume until I know that I love the(cent/scent).

2. To bake a-shaped cake, you'll need some.....(flour/flower).

3. I wanted to sit so I could the singer performing without any distractions(here/hear).
4. We have an before our appointment (our/hour).
5. There is no..... way to a great novel (right/write)
6. My is 13 years old. He likes to spend time outside in the(sun/son)
7. My cat was crazily chasing his while I read a fairy to my children(tale/tail)
8. The is on his way to the castle, but travelling at is very dangerous(knight/night)
9. If you accidentally drink a bottle of fabric dye, you might die(die/dye)
10. If you drugs, you will get arrested and end up in a prison(sell/cell)

Գ) ԲԱՌԱՊԱՇԱՐ

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է բառապաշարը:
2. Բառապաշարի ինչպիսի՞ տեղաշարժեր են կատարվում լեզվում:
3. Որո՞նք են լեզվի բառապաշարի հարստացման ներքին և արտաքին միջոցները:
4. Ինչպե՞ս է բնութագրվում լեզվի բառապաշարը ըստ ծագման:
5. Ինչպե՞ս է բնութագրվում լեզվի բառապաշարը ըստ գործածության ոլորտի:
6. Ինչպե՞ս է բնութագրվում լեզվի բառապաշարը ըստ գործուն (ակտիվ) և ոչ գործուն (պասիվ) շերտերի:
7. Ինչո՞վ են տարբերվում օտար բառերը միջազգային բառերից:
8. Ո՞ր բառերն են կոչվում հնաբանություններ. բացատրել նրանց կառուցվածքային խմբերը (բուն բառային, բառակազմական և ձևաբանական):
9. Ո՞ր բառերն են կոչվում նորաբանություններ:
10. Ի՞նչ են պուրիզմը, էֆեմիզմը և տաբուն (մաքրամոլություն, մեղմասություն, բառարգելում):
11. Ի՞նչ է պատճենումը, պատճենման ի՞նչ տեսակներ կան:

Գործնական առաջադրանքներ

1. Որոշել, թե տրված բառերը հայոց լեզվի զարգացման որ շրջանին են վերաբերում, դաստիարակել ըստ լեզվական շրջանների, բացատրել իմաստները:

ա) Կծիկ, բոբիկ, թաթուլ, թանամ, էտել, մասիսարա, զամբ, օջախ, ոգեմ, արտեան, հետ, պայլ, դարիպ, փարկալ, աշուղ, քիմիա,

հյուրախաղ, դորակ, դստրիկոն, դպիր, ծալպակաս, ձնծաղիկ, կոնյակ, երախայ, ընդաբոյս, նոր տարի, ասպակ, ինքնաքարշ, սունդուկ, աչքալոյս, թաս, թեզան, արցունք, որձակ, բոռալ, դագգահ, աղվոր, խուղ, շինական, հեր, նկան, նոխագ, նավասարդ:

բ) Օճան, գեմ, բագին, ականորս, սալօջախ, վայրապաց, նվագավար, բաժինք, շարժանկար, բոստան, բարակացավ, բարև, կարմրուկ, վոագել, ծիտ, պղերգ, ճառագրեմ, մելան, կաղամար, ֆառաշ, շամամ, հաւայ, պարոն, սուրմա, նշաւագ, նկան, մանձիլ, մատովակ, դենջակ, դակիշ, կաֆա, աչքածակ, բեկտեմ, բղուղ, բղջախոհ, գուճ, գուպար, դաստառակ, արմաղան, գիրկ, բեհեգ, բառգիրք, բամ, բարունակ, անանց:

2.Որոշել, թե տրված համանիշ բառերից յուրաքանչյուրը լեզվի զարգացման որ շրջանում է գործածվում:

Թիկունք-կոնակ, ծիտ-ճնճղուկ, տարբերել-զանազանել, երեխամանուկ, գերդ-ինչպես, վաստակել-շահել, մոտենալ-մերձենալ, ծախել-վաճառել, երկչոտ-վախկոտ, խենթ-գիժ-խելառ, ստույգ-ուղիղ-շիտակ-ճիշտ, կրպակ-կուղպակ, ձգել-արկանել, կարդալ-ընթեռնուլ, գղջալ-փոշմանել, ծուռ-թուր, պինդ-անոսր, հոգնել-վաստակել, պագանել-համբուրել, դառն-լեղի, բակ-գավիթ, ավագ-երեց:

3.Բացատրական բառարանների միջոցով որոշել հետևյալ հնաբանությունների իմաստները, բացատրել, թե ինչ նպատակով են դրանք գործածվում արդի հայերենում:

In addition to the UN member states, a number of NGOs promoting clean water and sustainable aquatic habitats have used World Day for Water as a time to focus public attention on the critical water issues of our era. Every three years since 1997, for instance, the World Water Council has drawn thousands to participate in its World Water Forum during the week of World Day for Water. Participating agencies and NGOs have highlighted issues such as a billion people being without access to safe water for drinking and the role of gender in family access to safe water.

6.Քերականական ի՞նչ հատկանիշներ ու կարգեր ունեն գոյականները, ածականները, թվականները, դերանունները, բայերը հայերենում, ռուսերենում և անգլերենում: Հիմնավորել օրինակներով: Համեմատությունների միջոցով ցույց տալ ընդհանրություններն ու տարբերությունները:

7.Հետևյալ օրինակների միջոցով ցույց տալ, թե ինչպես և ինչ միջոցներով է անցումը կատարված մի խոսքի մասից մյուսին:

Ա.Երկաթե, մանկուց, խաղաղություն, սիրելի, շարժում, գրող, բրդոտ, բարիանալ, մասին, հոգուտ, ձեռքից, համով, աղքատ, մութ, քրիստոնյա:

Բ. Мирный, железный, строитель, светить, обедать, стрельбище, сушить, гостить, золотой, утренний, голубиный, глиняный, работать, питье, досуха, стоянка, дремлющий, прощение, быстро.

Գ. The end, to end, poor boy, the poor, naives, went home.

8. Հետևյալ տեքստը թարգմանել ռուսերեն և անգլերեն, բոլոր բառերը խմբավորել ըստ խոսքի մասերի և ցույց տալ դրանց համապատասխանություններն ու անհամապատասխանությունները երեք լեզուներում:

Հայ ժողովրդի անցած ուղու մասին պատմում են ոչ միայն մագաղաթագիր մատյանները, այլև հայրենի լեռնաշխարհով մեկ սփռված պատմաճարտարապետական հուշարձանները: Դրանք տարբեր ժամանակահատվածներում ստեղծվել են մենաշնորհ ու քրտնաջան վարպետների կողմից: Դրանցից է Հռիփսիմեի վեհաշուք հրաշակերտը, որը գտնվում է Էջմիածնից հյուսիս-արևելք: Տաճարը դիմացել է բազմաթիվ փորձությունների՝ երկրաշարժ, պատերազմներ: Այդ հրաշագեղ տաճարն իր փառահեղ տեսքով այժմ էլ հիացնում է ամենքին:

ՇԱՐԱՀԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է շարակարգությունը: Ինչպե՞ս են իրացվում շարակարգային հարաբերությունները:
2. Ինչո՞վ է շարակարգությունը տարբերվում հարացուցությունից:
3. Ի՞նչ է շարույթը: Շարույթի ի՞նչ տեսակներ կան:
4. Ինչո՞վ է արտաքին շարույթը տարբերվում ներքին շարույթից:
5. Ի՞նչ է բառակապակցությունը: Շարույթի ո՞ր տեսակին է այն վերաբերում:
6. Ինչո՞վ է բառակապակցությունը տարբերվում նախադասությունից:
7. Բառակապակցություններն ի՞նչ հիմունքներով են խմբավորվում:
8. Ինչպիսի՞ն են բառակապակցության տեսակներն ըստ շարահյուսական արժեքի:
9. Ինչպիսի՞ն են բառակապակցություններն ըստ կազմության:
10. Շարահյուսական կապակցման ի՞նչ տեսակներ կան:
11. Որո՞նք են շարահյուսական կապակցման եղանակները:
12. Ի՞նչ է խնդրառությունը:
13. Ի՞նչ է առդրությունը:
14. Ի՞նչ է համաձայնությունը:
15. Որո՞նք են շարահյուսական կապակցման միջոցները:
16. Ի՞նչ է նախադասությունը: Որո՞նք են նախադասության ձևավորման հիմնական միջոցները:
17. Ի՞նչ եղանակներով է ծավալվում նախադասությունը:
18. Ինչպիսի՞ն է շարադասությունը տարբեր լեզուներում:

19. Ինչո՞վ է նախադասությունը տարբերվում լեզվական մակարդակի այլ միավորներից:

20. Ի՞նչ է ստորոգումը: Ի՞նչ դեր ունի ստորոգումը նախադասության կառուցվածքում:

21. Ինչպե՞ս է արտահայտվում ստորոգումը տարբեր լեզուներում: Ո՞րն է հեղինակի դերը նախադասության ձևավորման մեջ:

22. Ի՞նչ է եղանակավորությունը: Ինչպե՞ս է այն արտահայտվում:

23. Ի՞նչ է նախադասության տրամաբանական կառուցվածքը, և ինչո՞վ է այն տարբերվում քերականական կառուցվածքից:

24. Ի՞նչ հարաբերության մեջ են դատողությունը և նախադասությունը:

25. Ի՞նչ հիմունքներով են դասակարգվում նախադասությունները:

26. Ըստ կազմության քանի՞ տեսակ են լինում նախադասությունները:

27. Ի՞նչ տեսակների է բաժանվում պարզ նախադասությունը կառուցվածքային տեսակետից: Ինչո՞վ են տարբերվում նախադասության գլխավոր և երկրորդական անդամները:

28. Ինչո՞վ են տարբերվում երկկազմ և միակազմ նախադասությունները:

29. Միակազմ նախադասության ի՞նչ տեսակներ կան:

30. Ո՞րն է կոչվում բարդ նախադասություն:

31. Ի՞նչ հարաբերության մեջ կարող են լինել բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները:

32. Ի՞նչ եղանակներ ու միջոցներ կան բարդ նախադասության բաղադրիչների հարաբերության արտահայտման համար:

33. Ի՞նչ հարաբերության մեջ կարող են լինել բարդ նախադասության բաղադրիչները:

34. Ինչպիսի՞ հարաբերության մեջ են գտնվում համադասական նախադասության բաղադրիչները:

35. Որո՞նք են կոչվում գլխավոր և երկրորդական նախադասություններ:

36. Ի՞նչ տեսակների են բաժանվում բարդ ստորադասական նախադասությունները՝ ըստ բաղադրիչների քանակի:

36. Որո՞նք են կոչվում գլխավոր և երկրորդական նախադասություններ:

37. Ի՞նչ հարաբերությունների մեջ կարող են լինել բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները:

38. Ինչպե՞ս է կատարվում նախադասության շարահյուսական վերլուծությունը:

Գործնական առաջադրանքներ

1. Խմբավորել հետևյալ բառակապակցությունները՝ ա) ըստ կազմության, բ) ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, գ) ըստ բնույթի, դ) ըստ կառուցվածքի:

Ա. Հարյուրավոր տարիներ, նրանցից երկուսը, չափազանց գեղեցիկ ու նուրբ աղջիկ, անուշահոտ ծաղկափռշի, իմ հայրենի լեռնաշխարհ, հնչյունական համապատասխանություն, թևածել կատալուրթ երկնականարում, հեռու-հեռու մի աշխարհ, բարձրահոն ճակատին թափված, բրդյա թանկարժեք վարագույր, հնչյունական օրենք, համարյա միաժամանակ պատասխանել, միշտ հաճույքով պատասխանել դասը, շատ բարձր, կայուն բառակապակցություն, բավական հեռու, քերականական կարգ, նրա հմայիչ աչքերը, միանգամայն հիանալի, երեխաներից մի քանիսը, բոլորովին անհաջող, մեր գյուղի տան հոտավետ ծաղիկները, երկար տարիներ, անհամբերությանը սպասել, ֆրանսիացի գրող, ավելի հաճելի ձայն, ավելի

քան երկու տարի չտեսնել, ձեռքով շարժում, բաղադրյալ ստորոգյալ, ստորադասական նախադասություն, աչքը ծակ, չափազանց հետաքրքիր պատմություն, աչքը ճամփին, ջրի երես դուրս գալ, անձնական և փոխադարձ դերանուններ, սպիտակ մազերով կին, տքնաջան աշխատանքով վաստակել:

Բ. Интерес к музыке, один из них, очень ярко блестит, мой родной дом, правильное решение, скрипач из Москвы, пробудить интерес, прогулка верхом, пора вставать, зимний вечер, право на отдых, большая жажда славы, учиться в школе, спящая красавица, думаю о задаче, приветствовать моего спутника, любить такую жизнь, читает внимательно, играли под березой, майское солнце.

Գ. Both of them, stylish look, to greet the visitors, sleeping beauty, more important decision, to wait with patience, amazingly strong, summer days, some of the students, the most interesting film, the flowers in our garden, extremely happy, one of my relatives, to speak fluently, more convenient, American actress, comfortable chair, to live for more than 10 years, nice red dress, high mountain, true friendship, to play under the tree, endless horizons.

2. Գրել երկանդամ բառակապակցություններ և ընդարձակել:

3. Անդամատել նախադասությունները ըստ հնչերանգային միասնություն կազմող միավորների՝ շարույթների:

1. - Մարդ պետք է ապրի ծառի օրենքով՝ արմատով հողի խորքը ձգվի, սաղարթով՝ տարածվի դեպի արևը: Արմատը մեր հիշողությունն է, որ գնում է դեպի սկիզբը, դեպի պատմության խորքը, գնում է գործնալու: Սաղարթը ներկան է, որ բարձրանում է դեպի Արևը՝

ապագան: Եթե մեկը անցյալդ է ուզում գողանալ, վերագրել իրեն, ինչ ասել կուզե, պատրաստվում է գրկել քեզ ապագայից: Հետ նայելը հետ մնալու նշան չէ. ո՞վ է ասել, թե հետ նայելը և առաջ նայելը տարբեր բաներ են: Նույնն են: Որ կողմիդ վրա էլ որ նայես, առաջ ես նայում: Դա քո առջնն է: Եթե նայում ես քո պատմությանը, քո առաջն ես նայում, առաջ ես նայում, քո ապագային ես նայում: Մեղուն բոլոր կողմերից աչքեր ունի: Մեղվի համար հետն և առջն չկա: Ազգն ազգ է իր անցյալով, ներկայով, ապագայով: Որքան մյուս ազգերն ապրեն, մենք էլ կապրենք: Մեզ, ասել եմ, կպահի մեր ազգային ոգին: (ՀՄ)

2. Բա գաս, խավար, վտանգներով լեցուն միջնադարով գաս հասնես 20-րդ լուսավոր դարի շեմին ու կոտորվե՞ս...

Բա հիմա գաս, գաս հասնես երրորդ հազարամյակի շեմին ու քո 2000 տարվա փորձից մի դաս չքաղե՞ս:

Այդ 20 դարերի ոչ մի հատվածում, ոչ մի ճակատագրական պահի չկարողանա՞ս մի քայլ ետ կանգնես ժամանակին, մի դաշնակից ավելացնելով՝ մի թշնամի պակասեցնես, մի վիրավորանք կուտաս՝ 1000-ը խնայես, մի գյուղ տաս՝ 1000-ը պահպանելու համար:

Բա այսքան պարտություն կրես ու հաղթել չսովորե՞ս: (ՀՄ)

4. Հետևյալ հատվածներում ցույց տալ, թե շարահյուսական ինչ միջոցներով են կապակցվել գերադաս, ստորադաս անդամները և նախադասությունները (վերջավորություններ, կապեր, շաղկապներ, մակբայներ, շարադասություն, հնչերանգ):

Ա. Մթնածոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտ չի դնում անտառներում: Սակայն Մթնածորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք

չի եղել: Ոռնում են գայլերը՝ դունչը լուսնյակին մեկնած, վարագները ժանիքով փորում են հողը, աշունքվա փտած կաղինները ժողովում: Եթե սկար մի խոզ ետ մնար մյուսներից, արջը թաթի մի հարվածով ճեղքում է փափուկ վիզը, մի երկու պատառ լափում, լեշը ծածկում չոր ցախով ու տերևներով, քար դնում վրան, փնթփնթալով հեռանում մինչև լեշը հոտի: Գյուղում Ավին լավ որսորդի համբավ ուներ: Տան ապրուստի մի մասը նա Մթնաձորի խորքերից էր հանում: Բացասներում միրհավ էր որսում, արտերի մոտ՝ կաքավ ու լոր, թակարդ էր լարում աղվեսի համար, երբեմն էլ Մթնաձորի խորքերն էր գնում, ժամերով նստում քարի հետևում, մինչև վարագները ջրի գային: Առաջին աքլորականչի հետ զարթնում էր Պետին, տրեխները հագնում, տան առաջ հոսող առվակի ջրից երկու կից անում, երեսը լվանում, փափախով սրբում ու գեղի ծայրին կանգնում, որ կովերը դուրս անեն, ինքը սարը տանի պահելու: (ԱԲ)

Բ. Так вот, слушайте, как я до понимания музыки дошел. Ночь была июньская. И заря тихонько тлела над землей. Лес за поворотом открылся. Весь стоит в темноте, в росе, в тишине... Я осторожно весла бросил. Лодка у меня сама по течению плывет. И вдруг я вздрогнул, будто меня обожгло. Из леса, из той темноты и тишины нежно зазвенели сотни колокольчиков. И запел лес громко. Казалось, что весь лес, и вода, и небо, и все листья - все громко поет. Стыдно сказать, но неожиданно заплакал я. Всю свою жизнь вспомнил - что в ней было и плохого, и хорошего. И от тех слез растаял лед на сердце. С тех пор как музыкант приезжает, пожалуй, каждый день сюда я прихожу, жду. Вот какие дела. (КП)

Գ. My brother and his wife have just gone back to their home in the country after spending a week with us. As we live in London, they were

glad of the chance to visit as many theatres and music-halls as they could. They have a good cinema in the little town where they live, so they didn't want to see any films while they were here, but were very keen to see as many plays as possible.

During the day, my wife and sister-in-law used to visit the shops, and one afternoon they went to a picture-gallery. Then in the evenings, we would all meet for dinner and go on to a play.

5. Դուրս գրել գոյականական, բայական, բառակապակցությունները: Բացատրել լրացումների իմաստները, նշել, թե նախադասությունն ինչ անդամ են:

Ա. Դարեր առաջ Փաթլուն ամիրան հսկայական բանակով հարձակվեց Անիի վրա: Հայերը փոքրաթիվ ուժերով համառորեն պաշտպանեցին հայրենի քաղաքը և չթողեցին, որ թշնամին գրավի այն: Ամբողջ մի տարի Անին մնաց պաշարված: Պատերազմը գնալով սաստկացավ: Թշնամական զորքերը մոտեցան քաղաքի պարիսպներին: Կովի ահեղ ժամին Անիի միջնաբերդի վրա հայտնվեց Այծեմնիկ անունով քաջարի մի աղջիկ:

Այծեմնիկն իր կանանց գնդով սկսեց կատաղորեն քարկոծել առաջանալ ձգտող թշնամուն: Հակառակ կարկուտի պես տեղացող նետերի տարափին, որոնք չարաչար վիրավորում էին կովող աղջիկներին, Այծեմնիկը մնաց անդրդվելի: Արհամարհելով ցավն ու մահը՝ նա արագ շարժումներով հանում էր թշնամու նետերն իր մարմնից և նրանցով խցում թշնամուն:

Այծեմնիկի արարքը զարմանք պատճառեց թաթար զինվորներին և մեծ տազնապ առաջացրեց նրանց մեջ:

Դարեր անցան: 1908-ին Անիի ավերակները պեղող գիտնականները քաղաքի միջնաբերդի վրա գտան մի երիտասարդ կնոջ՝ նետերով խցված գանգ: Գիտնականները այն կրծիքը հայտնեցին,

որ դա հավանաբար հայրենի քաղաքի պաշտպանության դիրքերի վրա ընկած հայ քաջուհու՝ անեցի Այծեմնիկի կամ նրա մարտական ընկերուհիներից մեկի գանգն է: (ԱՂ)

Բ. Над Москвой шумели теплые грозы... Он умер перед лицом новой земли-богатой, чистой, прекрасной...

Осталось чувство сиротства, сдавливающее сердце. Трудно сейчас писать о Горьком. Смерть его ощущается почти так же, как более ста лет назад ощущалась смерть Пушкина.

Горький был нашей совестью, честностью, нашим мужеством и любовью. Как нельзя лгать ребенку, так невозможно было забыть о строгости к себе, чистоте собственных помыслов и правдивости книг, когда судьей и товарищем был Горький. Он оставил нам традиции большой литературы, пришедшей из прошлых веков и уходящей в будущее.

Горький был непримирим. Он жестоко бил по человеческой тупости, грубости чувств, дикости нравов. Его жизнь и его старость были завидны и прекрасны. Он знал высокое счастье никогда не устающей мысли, счастье острой памяти и жадности каждой жизненной мелочи. (КП)

Գ. At night when I feel tired and sleepy. I go up to my bedroom and switch on the electric light. I take off my shoes, undress and put on my pyjamas. Then I get into bed and switch off the light.

After a few minutes I fall asleep. I sleep the whole night through.

Punctually at seven-thirty in the morning, the alarm-clock rings and wakes me up . I get out bed, put on my dressing-gown and slippers, and go into the bathroom, where I turn on the hot and cold taps. While the water is running into the bath, I wash my face and neck, clean my teeth,

and shave. My shaving things are on the shelf above the basin. Then I turn off the taps and have my bath. Sometimes I have a shower. When I've dried myself with a towel, I get dressed.

6.Ի՞նչ հիմունքով կարելի է տարբերել ընդգծված բառերի քերականական իմաստները և որոշել նրանց շարահյուսական կապը այլ բառերի հետ:

Ա. 1.Մենք գնացել էինք Արցախի պետական համալսարանը.
համալսարանը բավական հեռու էր:

2.Բեմ բարձրացավ աղջիկը. աղջիկը շատ հուզված էր:

3.Ես հպարտանում եմ նրա խելքով. խելքով էր հասել նա ամեն ինչի:

4.Ես գնեցի նրա՝ վաղուց երազած գիրքը. գիրքը շատ հետաքրքիր էր:

5. Կեցությունը որոշում է գիտակցությունը. գիտակցությունը որոշում է կեցությունը:

7. Ընկավ դողացող ձեռքից և կոտրվեց. ձեռքից վաղուց էր վիրավորվել:

Բ. 1.Мы сели в такси, в такси было тепло и уютно.

2.Мальчику купили новое пальто, пальто висело на гвоздике.

3.Ночь сменяет день, день сменяет ночь.

4.Звание обогащает опыт, опыт обогащает звание.

5.Танк обстрелял дзот, дзот обстрелял танк.

Գ. 1. We went to the cinema, the cinema was in the centre of the town.

2. Everyone admired Jane, Jane was very talented.

3. I bought a book, the book interested me a lot.

4. The old man got into the car, the car was very expensive.

5. He found the wallet in the street, the street was overcrowded.

7. Ընդգծված բառերով նախադասության սահմանում քանի՞ բառակապակցություն կարելի է կազմել:

Ա. Բարձրակրունկ **կոշիկները** մեջտեղ են եկել միջնադարյան Փարիզում: Դրանց պատճառը եղել է նեղ փողոցների կեղտոտությունը: Դրանք սալահատակված չէին, և բոլոր **մարդիկ** խրվում էին լպրծուն ցեխի մեջ: Մի հնարագետ ու բազմահմուտ **արհեստավոր** սկսեց կարել բարձրակրունկ կոշիկներ, որոնք հագնում էին և տղամարդիկ, և՛ կանայք: Հետագայում բարձրակրունկը դարձավ բոլոր **կանանց** մենաշնորհը: Այժմ այդպիսի **կոշիկներ** հագնում են, որպեսզի ոտքերը առավել **նրբագեղ** երևան:

Բ. 1) Очень **молодой** человек настаивал на своем. 2) **Часто** наблюдаемые факты объясняются. 3) Я развлекал его **стихами** моего друга. 4) Майское солнце ласково **согревает** холодную землю. 5) Новая **повесть** молодого писателя получилась неинтересная. 6) Вчера в лесу я **увидел** медведя. 7) В Париже **ночи** серые, темные. 8) Река **течет** под мостами черной густой смолой. 8) Под березой весело **играли** маленькие бельчата. 9) Ребята быстро **побежали** в березовую рощу.

8. Խմբավորել բառակապակցությունները՝ ելնելով բաղադրիչների շարահյուսական հարաբերության բնույթից՝ ա) համաձայնություն, բ) խնդրառություն, գ) առդրություն: Ի՞նչ հետևություն կարելի է անել՝ համեմատելով երեք լեզուների արդյունքները:

Ա. Վախից խիտել, ընթերցել գիրք, տեսակ-տեսակ ծաղիկներ, բազում հիշողություններ, հայ և ռուս ժողովուրդներ, խելքից գուրկ, ցնծությունից թնդալ, գրչով գրել, գրել տետրում, իմ և հարևանի երեխաները, ճանաչել հաղթողին, չափազանց արագ, դիմավորել

ընկերոջը, հայերիս ճակատագիրը, ամուսնանալ մեկի հետ, տաշել քարը գործիքով, նրանք՝ մեր հավատարիմ ընկերները, ճակատագրին հնազանդ, թերություններից գերծ, գեղեցիկ խոսել, արագ զարգացում, գույն-գույն շորեր, զով գիշեր, յոթ գլխանի, այսքան դժվար, հրավիրվել նրանցից, հեռանալ մորից, տեղավորվել բազմոցին, պառկել հիվանդանոցում, երրորդ կուրս, նույնքան արագ, ծաղիկ հասակ, ուսանողների ճաշակը, մայրաքաղաքը՝ իմ վերակառուցվող Ստեփանակերտը:

Բ. Достояние народа, безмерно счастливый, солнечным утром, любить человека, открытое окно, совет отца, вчера утром, девочка из легенды, ответил улыбаясь, вернуться домой, горные вершины, построить дом, дремучий лес, прийти на праздник, зрелый возраст, на восьмой странице, приступил к работе, румяный от мороза, вечерный звон, с веселой песней, кувшин воды, земля бедняка, уловимый аромат, увлечение охотой, сказал сторяча, говорить красочно, длинная дорога.

Գ. Depends on you; come here; Mary's brother; look at me; these books; go away; black table; a book cover; his answer; read a letter; nice of you; a running boy; bad manners; speak loudly.

9.Թարգմանել հետևյալ բառակապակցությունները ռուսերեն և անգլերեն: Բացատրել, թե արդյոք համընկնում են բառակապակցության բաղադրիչների շարահյուսական կապակցման եղանակները և միջոցները:

Բաց պատուհան, հոր սեր, աշխատանքի իրավունք, ջրով տակառ, հանդիպել ընկերոջը, ձմեռային գիշեր, նայել ինձ վրա, ժո-

դովրդի ազատություն, գունավոր ծաղիկներ, սպասել հետաքրքրությամբ, բրդից գործվածք, լողալ գետում, փոխադրել ուրբաթ, դռան բանալի, մտան սենյակ, ընթերցեց գիրքը, ծաղիկների փունջ, արագ շարժում, ծառայել ժողովրդին, խոչընդոտել քայլերը:

10.Ընդգծել ստորոգյալները և ցույց տալ, թե քերականական ինչ միջոցներով է արտահայտվում ստորոգումը հայերենում, ռուսերենում, անգլերենում:

Ա. Սրահի առաստաղին ամեն գարնան իրենց բները նորոգում և ձագ են հանում գարնան հետ հարավից վերադարձող ծիծեռնակները:

Ինչ զարմանալի աշխատասեր և մշտաշարժուն արարածներ են, առանց մի վայրկյան հանգիստ առնելու՝ նրանք ցելս ու շյուղ են կրում ու բույն հյուսում: Վարպետ որմնադիրի նման մի շարք ցելս էին դնում, մի շարք ավագ, մի շարք ճյուղեր՝ բնին ամրություն տալու համար:

Վերջապես ավարտեցին իրենց բույնը: Էզր ձվեր ածեց և թուխս նստեց:

Ամուսինը համեղ պատառներ էր բերում, դնում ընկերուհու բերանը, շոյում, հաճոյախոսում ու նորից սլանում դեպի արևի շողերով ողողված լագուրը:

Այդպես ձագեր ունեցան, և նրանց կյանքի իմաստը միանգամից փոխվեց: Այժմ միայն և միայն զբաղված էին ձագերի հոգսով: Իսկ այդ հոգսը քիչ չէ: Նախ՝ պետք է շարունակ կերակրել այդ բկլատ արարածներին, ապա՝ հենց փոքրուց նրանց վարժեցնել կարգ ու կանոնի, մաքրասիրության: (ՎԱ)

Բ. Приходилось ли тебе видеть в лесу большой куст, который покрыт крупными розовыми цветами и красными плодами? На

ветках куста растут острые шипы. Это шиповник. Так называют дикую розу за ее шипы. Шиповник родной брат нашей садовой красавицы. Но шиповник не завидует своей сестре. Ведь и его любят. У него пахучие цветы, а в плодах много ценных витаминов.

Գ. 1. George Bemand Shaw's gift of ready wit is well illustrated by the story of how he turned the laugh against a member of the public who was expressing disapproval of one of his plays.

It was the first night of "Arms and the Man", a play which had an enthusiastic reception from a crowded house. When the curtain fell at the last act there was tremendous applause. One man in the gallery, however, kept up string of catcalls and whistling, thus expressing his disapproval.

2. He is an engineer by profession. He may not know about it.

He has become a famous man. They took a walk as far as the river.

He has to work for his living. His ship sails tomorrow.

11.Առանձնացնել միակազմ նախադասությունները, որոշել տեսակները և ցույց տալ նրանց տարբերությունը երկկազմ նախադասություններից:

Ա. Արդյոք մի բան հասկանու՞մ եք հայից: Որքա՞ն տարօրինակ, հանելուկային արարած, որքա՞ն խաբուսիկ: Երևույթը, ո՛չ ինքը, իր նկարագիրը: Զուտ աշխատանք: Որո՞նում ես իր ինքնությունը, գտնում, բայց և իսկույն տեսնում ես, որ դա էլ նորից երևույթ էր: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում նկարես: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը: Ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստն իր երկրի դիրքն է, ինքն ամենից համառ կառչեց նրան: Որքա՞ն անհույս է թվում իր ապագան, բայց և որքա՞ն հուսացող է նա: Իր կյանքում նա

երկու բան չտեսավ, մեկ՝ բախտ, մեկ էլ՝ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է:

Ահա նայիր այս բեռնակրին: Ի՞նչ է սա: Մեջքին մի սար բեռ՝ ձկվում է, մեջքը կոտրում: Որքա՞ն ուժ, որքա՞ն աշխատասիրություն: (ԴԴ)

Մի փռշտոված փշատենի,
Մի հռշտոված խաղողի որթ,
Նորքի վրա մի հին բարդի,
Մի հին բոստան Արագի մոտ,
Մի տարագիր հոգու բաղձանք,
Մի ծիծեռնակ ու մի կրունկ,

Պանդխտության ճամփաներում
Հազար քարի բախված կրունկ.

Որդեկորույս մայրերի ողբ,
Որբերի սիրտ վերքերի մեջ,-

Այդպիսինն է Հայաստանը
Մեր հինավուրց երգերի մեջ: (ՀՄ)

Բ. Когда в солнечное утро летом пойдешь в лес, то на полях, в траве видны алмазы. Все алмазы блестят и переливаются на солнце разными цветами - и желтым, и красным, и синим. Когда подойдешь ближе и разглядишь, что это такое, то увидишь, что капли росы собрались в треугольных листах и блестят на солнце. Листок этой травы внутри мохнат и пушист, как бархат. И капли катятся по листку и не мочат его.

Когда неосторожно сорвешь листок с росинкой, то капелька скатится, как шарик светлый, и не увидишь, как проскользнет мимо стебля. Бывало, сорвешь такую чашечку, потихоньку поднесешь ко

рту и выпьешь росинку, и росинка эта вкуснее всякого напитка покажется. (ЛТ)

За окном темно. Конец октября. Светает поздно. На часах светящийся циферблат, и я отчетливо вижу стрелки. Они показывают шесть. Летом в такое время было светло. Солнце уже отрывается от горбушки далекого холма. И хотя еще прохладно, но на душе становится с каждой минутой все радостнее. (СВ)

12. Գտնել թերի նախադասությունները և բացատրել դրանց կազմությունը:

Նա իրեն կանգնած էր տեսնում մի մեծ և դժվար պայքարի առջև: Պայքար ներսը՝ նախարարների դեմ, պայքար դուրսը՝ պարսիկ պաշտոնյաների բանասարկությունների, թշնամանքի դեմ: Բացի այդ՝ ճանապարհին պիտի լցնես Խոսրովի ականջը: -Քո՞ մասին: - Իմ՝ պատասխան թղթի անմասնակցության մասին: Ձգոն էր միայն Արծվին: Երբեմն շրջվում էր և նայում էտ: Ոչ ոք, ոչ մի շունչ, ո՛չ գազան, ո՛չ թռչուն: Ձորավիզ ձեզ ժողովուրդն հայոց. ձեզ ոգի՝ ոգիները բյուրավոր: Բավ է: Շատ հանդուրժեցինք այդ Մամիկոնյանին: Պետք է ջնջել նրան երկրի երեսից:

-Ընտանիքո՞վ է գնացել սեպուհը, թե՞ միայն Անահիտի հետ:

- Ընտանիքով, աղախիններով, իմ իշխանուհին էլ հետը...

Դատարկ է ամրոցը, նստել եմ բուրի պես մենակ: Ես կովից փախչողը չեմ: Ձեր կամքը: Ի՞նչ ունեմ աշխարհում: Մի կյա՞նք: Ձեզ: Հայրենիքին: (ԴԴ)

11.Կատարել հետևյալ նախադասությունների աստիճանական վերլուծություն (գտնելով նախադասության մեկ անդամի դերում հանդես եկող երկու, երեք և ավելի աստիճանների կառույցներ):

Ա. 1) Սիրում եմ մի տեսակ ծաղրածուի դեր կատարել՝ մասամբ իրենց չնչիությունը ծածկելու և մասամբ հասարակության մեջ սրամիտ ու սրախոս մարդու համբավ վայելողի անմեղ փառասիրությանը գոհացում տալու համար: Մի քանի բոպե առաջ այնքան պարզ և հասկանալի այդ մարդն այժմ իր շփոթված և մռայլ դեմքով այն աստիճան մութ ու խորհրդավոր էր երևում նրան: (ՆԴ)

2) Նրանց աղաղակը դարձավ ավելի սուր ու համառ՝ համեմված երեխայական անհոգ քրքիջով և մեծերից լսած փոխադարձ հայհոյանքներով: (ՆԴ)

3) Սյունի տակ ընկած կաշվե պայուսակի մեջ պահված թուղթը կմատներ մասնագետին: (ԱԲ)

Բ. Счастлив путешественник, попавший в нетронутые края.

Услышав выстрел, Касьян быстро закрыл глаза рукой.

Я несколько раз просыпался ночью, боясь проспать утро.

Обсудив положение, мы решили продолжать путь без проводников.

Գ. April. And the air dry

As the shoulders of a water buffalo.

Grasshoppers scratch at the dirt,
rub their wings with thin legs
flaring out in front of the soldiers
in low arcing flights, wings a blur.

The soldiers don't notice anymore,
seeing only the wreckage of the streets,
bodies draped with sheets, and the sun,

how bright it is, how hard and flat and white.

It will take many nails from the coffinmakers
to shut out this light, which reflects off everything:
the calloused feet of the dead, their bony hands,
their pale foreheads so cold, brilliant in the sun.(B.T.)

12. Որոշել նախադասությունների կառուցվածքային տեսակները: Առանձնացնել բարդ համադասական նախադասությունները, որոշել դրանց բաղադրիչների իմաստային հարաբերությունները, կապակցման եղանակները:

Ա.Ծիծեռնակը բույն էր շինել մեր տան օձորքում: Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալիս, ու նրա բույնը միշտ կպած էր մեր սրահի օձորքին: Եվ գարունն էր բացվում, և մեր սրտերն էին բացվում, հենց որ նա իր ուրախ ճիչով հայտնվում էր մեր գյուղում ու մեր կտուրի տակ:

...Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտտվում էր ամբարի տակը, իսկ մենք՝ երեխաներս, մի-մի փետ առած, պտտում էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկավ ու փախավ՝ դունչը լիզելով... Շատ տարիներ էին անցել, բայց ես չեմ մոռանում ո՛չ այս դեպքը, ո՛չ այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ է մայր, ու սիրտն էլ է սիրտ, ինչպես մերը:(ՀԹ)

Այսպես վաստակած նա ծովն է մտնում,
Եվ ծովն է վերջին կայանը նրա,
Բայց ծովի մեջ էլ հանգիստ չի գտնում,
Նավեր է պահում իր կրծքի վրա:(ՀՄ)

Մաստիկ անձրևների ժամանակ հեղեղը այդ կողմերում ոչ միայն իր հետ տանում էր մարդիկ, անասուններ, այլև ահագին քարածայրեր էր պոկում սարերի կրծքից: Այդ սարսափելի ողջակեզը կարող է ամեն մարդու վրա սուկալի տպավորություն գործել, բայց խանի մեջ նա բարձրացրեց ծիծաղ և մի տեսակ գազանային զվարճություն: (Դ)

Բ.Далеко где-то гремел гром, и его ворчливые звуки всё приближались. Крупные капли дождя стал падать на траву. Вот грянул гром, и тучи, охваченные синим огнём, дрогнули. Крупный дождь полился ручьями, и удары грома казались в этой пустынной степи угрожающими. Трава под ударами ветра и дождя ложилась на землю. Молнии, слепившие глаза, рвали тучи. В голубом блеске их вдали вставала горная цепь, сверкавшая синими огнями. Молнии гасли, и она исчезала, как бы проваливалась в тёмную пропасть. Всё гремело, вздрагивало, шумело. Земля, казалось, дрожала в страхе перед гневом небес. Мне было весело. Дивный хаос увлекал меня, настраивал на героический лад. И чем мне было выразить моё великое волнение и мой восторг перед грандиозной картиной природы? Я запел, запел громко, во всю силу. Ревел гром, блистали молнии, а я пел и чувствовал себя в полном родстве со всеми звуками. (По М.Горькому)

Գ. Dear Mr Houches,

Thank you for your recent renewal of your insurance policy with Top Car Insurance.

It has been brought to our attention that at the end of your renewal call you registered a complaint and stated that you were dissatisfied with the service you had received.

We value your custom and I assure you that we take all customer feedback seriously. On behalf of the company I would like to apologise for the length of time it took for you to receive your final quote for this renewal. I am also sorry for the inconvenience caused when the discounts you received were not automatically applied.

We have taken your suggestions on board and will review our renewals process for existing customers. We understand your point that the process should not take as long for existing customers as for new customers buying a new policy.

In appreciation of the many years you have been a customer of Top Car Insurance we are happy to refund you the difference in price between your new and your previous premium, i.e. £73.20. I have also made a note on your account to ensure that your next renewals process will run more smoothly for you.

We value your feedback and will use it to improve our service.

We trust that you will find this a satisfactory response to your complaint and that this correspondence will bring this matter to a close. However, should you wish to discuss this matter further, please let us know how best to contact you.

13. Որոշել բարդ ստորադասական նախադասությունների կառուցվածքային տիպերը, տալ ստորադասական նախադասության գծապատկերը: Վերլուծել ըստ նախադասության անդամների:

Ա. 1.Այնքան էր գեղեցիկ նա, որ թվում էր, թե հողեղեն չէ, այլ մի հավերժահարս, որ դուրս էր եկել ծովի փրփուրներից:

Կրծքին մեխակի կարմիր ծաղիկն էր ամրացնում, որ զբոսանքի դուրս գա...Շունչը պահել էր, որ ոչ մի հնչյուն չթոցնի:

Այնքան մեղմանուշ, այնքան դյուրիչ էր նվագած եղանակը, որ Ջուլիետան կարծում էր, թե իր սրտի լարերի վրա են նվագում: (ՆԴ)

2. Երբ Դավիթ Ապրեսյանը բոլորեց իր քառասուն տարին, չգիտես ինչու, սկսեց ափսոսանքով մտածել անցած տարիների մասին, որոնք հեռացել էին ոչ թե գլորվելով, ինչպես ասում են, այլ մի տեսակ քառատրոփ արշավանքով և իրենց ոտնահետքերում թողել էին արդեն մոխրագունած քունքեր, թեթև գիրություն, թեթև ծուլություն, խոհունություն և կյանքի նկատմամբ մի յուրօրինակ իմաստասիրություն, որը հատուկ է այդ տարիքի մարդկանց:

Բժշկականի երկրորդ կուրսումն էի, երբ պայթեց Հայրենական պատերազմը: Այն ժամանակ Դավիթը մի անհանգիստ պատանի էր, նրա մեջ զարմանալի կերպով շեշտվում էին երկու ներհակ բնավորություններ: Երբեմն հավատում էր, որ ինքը շարունակ որոնումների մեջ է, երբեմն էլ համոզվում էր, որ ոչ մի որոնում էլ չկա, ինքը դոփում է տեղում, և կյանքը իր բոլոր երևույթներով շրջանցում է իրեն:(ԱԱՎ)

Բ. Бывает часто, что в городах на пожарах остаются дети в домах и их нельзя вытащить, потому что они от испуга спрячутся и молчат, а от дыма нельзя их рассмотреть. Для этого в Лондоне приучены собаки. Собаки эти живут с пожарными, и когда загорится дом, то пожарные посылают собак вытаскивать детей. Одна такая собака в Лондоне спасла двенадцать детей; ее звали Боб.

Один раз загорелся дом. И когда пожарные приехали к дому, к ним выбежала женщина. Она плакала и говорила, что в доме осталась двухлетняя девочка. Пожарные послали Боба. Боб побегал по лестнице и скрылся в дыме. Через пять минут он выбежал из дома, а в зубах за рубашонку нес девочку. Мать бросилась к дочери и плакала от радости, что дочь была жива. Пожарные ласкали собаку и

рассматривали ее, не обгорела ли она; но Боб рвался опять в дом. Пожарные подумали, что в доме еще есть что-нибудь живое, и пустили его. Собака побежала в дом и скоро выбежала с чем-то в зубах. Когда народ рассмотрел то, что она несла, то все расхохотались; она несла большую куклу. (ЛТ)

Գ. Mark Twain, the famous American writer, was travelling in France. Once he was going by train to Dijon. That afternoon, he was very tired and wanted to sleep. He therefore asked the conductor to wake him up when they came to Dijon. But first he explained that he was a very heavy sleeper." I'll probably protest loudly when you try to wake me up." he said to the conductor."But do not take notice, just put me off the train anyway."

14. Կատարել նախադասության անդամատում աստիճանական կարգով՝

ա/ըստ բառակապակցությունների,

բ/ըստ բառերի և բառաձևերի,

գ/ըստ հնչերանգային միասնություն կազմող միավորների:

Ա. 1. Օվկիանոսի մեջ ծաղկեփնջի պես մի կղզի կար՝ մշտափթիթ ու բուրումնավետ: Եվ այնտեղ մահ չկար: Ապրում էին ծիլ ու թիթեռ, թև ու թռչուն՝ միշտ պայծառ, միշտ ուրախ, և երբ մոտենում էր թառամելու վայրկյանը, իջնում էր անմահության ցողը նրանց վրա, և նորից մանկանում էին նրանք, թարմ ու գվարթ շողշողում:

Մարդիկ գնում էին անմահության աղբյուրը, որ բխում էր հակինթե ժայռերի կրծքից, լողանում էին լուսեղեն ջրերի մեջ: Եվ հաղթական կյանքը ծաղկում էր ամենուրեք, մահն անգոր էր մի տերևի վրա ձեռք դնել անգամ:

2. Եփրատն այդ կողմերում արագընթաց էր ու աղմկաշատ: Նրա ջրերն անցնում էին զառիկող լանջերի նոսն ու նշենու պուրակների, հոնի թփուտների մոտով: Գետի զուլալ ջրերը ողողում էին ժայռոտ ափերը, զարկում պսպղուն որձաքարերին, խշշում ու փրփրում: Այնտեղ, ուր հորդառատ Եփրատը դառնում էր փոքր-ինչ սակավաջուր, բայց նույնքան սրընթաց ու խոխոջուն, վտակներից մեկը մի ահեղի քարաժայռ էր ելնում ուղղաձիգ լանջակողերով:

Ժայռի երկնաբերձ կատարը եզերում էին բերդի հաստաբետ սլաքիսպները, իսկ մուտքի մոտ մի դրոշ էր ծածանվում: Երբ քամին ուղղում էր կարմիր պաստառը, դրոշի վրա ցայտուն գծագրվում էին երկգլուխ արծիվը և կաթողիկոսական զինանշանի խաչը:

Բարձրաբերձ էր քարակերտ բերդն ու անառիկ: Կառուցել էին խոշոր կոպտատաշ քարաբեկորներից՝ ամրացնելով կապարե հանգույցներով: Բազմաշտարակ ամրակուռ բերդ էր դա, և ողորկ քարաժայռերն ու դեպի վեր տանող ճանապարհի մեծ թեքությունը առավել անմատչելի էին դարձնում այն:

Դեպի ամրոց տանող գաղտնի անցումները հսկում էին կաթողիկոսի անվեհեր ու զգոն զինվորները, որոնք թաքնվում էին թեք լանջերի խիտ թփուտների մեջ, և թշնամիները երբեք չէին իմանում՝ որ կողմից են տեղալու անթիվ նիզակներն ու նետերը:

Ամրոցը գտնվում էր Կիլիկիայից դուրս, բայց նրա սահմանին շատ մոտ: Այդուհանդերձ հայ եկեղեցու սրբազան հայրերն իրենց նստավայրի համար ավելի լավ տեղ և նպաստավոր դիրք չէին կարող գտնել. բերդն անվտանգ էր ու աղետի պահին միշտ կարելի էր դիմել հայրենակիցների օգնությանը: Բացի դրանից՝ կաթողիկոսն աշխատում էր որքան կարելի է հեռու մնալ արքայից, որն անչափ սիրում էր խառնվել եկեղեցու գործերին:

Բերդը կառուցել էին բյուզանդացիները և կոչել Հռոմկլա հունական ամրոց: Հետո այն ձեռքից ձեռք էր անցել. հույներից՝

արաբներին, արաբներից՝ հայոց իշխան Գող Վասիլին, սակայն Հռոմկլա անունը մնացել էր անփոփոխ, բերդը՝ կանգուն: Դա Կիլիկիո հայոց կաթողիկոսի արձանագրություն էր: (ԹԶ)

Բ. На третий день подъем по снежной равнине сделался более заметным, и появилось больше трещин, которые замедляли движение. Приходилось идти осторожно, прощупывая снег, чтобы не провалиться через тонкий слой его, скрывающий трещины.

На севере тучи расходились, разгоняемые ветром, и между их серыми клочьями то показывались, то исчезали горы, которые тянулись длинной цепью по всему горизонту.

На их белоснежном фоне чернели скалистые отроги. Незаходящее солнце катилось над самым гребнем хребта, тускло светя сквозь пелену туч и окрашивая их в красноватый цвет.

Снеговая равнина на переднем плане покрылась пятнами и полосами, отраженными от неба, синеватого и розового цвета. Общая картина снеговой пустыни и таинственного хребта, который впервые предстал перед глазами путешественников, была поразительна.

Подъем на этот хребет продолжался в течение трех дней вследствие сильных трещин льда. Ледяной поток, то есть ледник, который спускался по долине южного склона хребта, имел до километра в ширину и с обеих сторон окаймлен крутыми темными откосами, покрытыми снегом. (В. Обручев)

Գ. Today's grandparents are joining their grandchildren on social media, but the different generations' online habits couldn't be more different. In the UK the over-55s are joining Facebook in increasing numbers, meaning that they will soon be the site's second biggest user group, with 3.5 million users aged 55–64 and 2.9 million over-65s.

Sheila, aged 59, says, 'I joined to see what my grandchildren are doing, as my daughter posts videos and photos of them. It's a much better way to see what they're doing than waiting for letters and photos in the post. That's how we did it when I was a child, but I think I'm lucky I get to see so much more of their lives than my grandparents did.'

Ironically, Sheila's grandchildren are less likely to use Facebook themselves. Children under 17 in the UK are leaving the site – only 2.2 million users are under 17 – but they're not going far from their smartphones. Chloe, aged 15, even sleeps with her phone. 'It's my alarm clock so I have to,' she says. 'I look at it before I go to sleep and as soon as I wake up.'

Unlike her grandmother's generation, Chloe's age group is spending so much time on their phones at home that they are missing out on spending time with their friends in real life. Sheila, on the other hand, has made contact with old friends from school she hasn't heard from in forty years. 'We use Facebook to arrange to meet all over the country,' she says. 'It's changed my social life completely.'

Teenagers might have their parents to thank for their smartphone and social media addiction as their parents were the early adopters of the smartphone. Peter, 38 and father of two teenagers, reports that he used to be on his phone or laptop constantly. 'I was always connected and I felt like I was always working,' he says. 'How could I tell my kids to get off their phones if I was always in front of a screen myself?' So, in the evenings and at weekends, he takes his SIM card out of his smartphone and puts it into an old-style mobile phone that can only make calls and send text messages. 'I'm not completely cut off from the world in case of emergencies, but the important thing is I'm setting a better example to my kids and spending more quality time with them.'

Is it only a matter of time until the generation above and below Peter catches up with the new trend for a less digital life?

15.Առանձնացնել շարույթները և ընդարձակել՝ դարձնելով միաստիճան, երկաստիճան, բազմաստիճան:

Երբ մենք մտանք արվեստանոց, Մինասը վառեց բոլոր լամպերը, և պատերից մեզ նայեցին նրա աշխատանքները: Այն, ինչ էս տեսա, այնքան անսպասելի էր ինձ համար, որ մինչ այդ եղած ամեն ինչ՝ անձրև, ցեխ և ուրիշ բաներ, իսկույն անհետացան, ասես ցնդեցին: Թվաց, թե ինչ-որ տարօրինակ բան կատարվեց, այնպիսի մի ապրում ունեցա, որպիսին երբևէ չէի ունեցել:

Ամբողջ երեկո և՛ արվեստանոցում, և՛ տունդարձի ճանապարհին, և՛ տանը ես շարունակ փորձում էի որևէ կերպ բնորոշել ինձ հետ կատարվածը, գտնել այն բառը, որը համապատասխաներ Մինասի նկարներից ստացած առաջին տպավորությանը, բայց այդպես էլ չկարողացա գտնել այն: Այն բառը միտքս եկավ շատ տարիներ անց, եկավ այն ժամանակ, երբ ես վաղուց արդեն չէի փնտրում այն:

Վենետիկում էր: Մենք՝ համերգային խմբի անդամներս, դուրս եկանք հյուրանոցից և ուղղվեցինք դեպի Սուրբ Մարկոսի հրապարակ՝ մեր ուղերթը ճշտելով բազմաթիվ ուղենշաններով գրված եվրոպական գրեթե բոլոր լեզուներով՝ բացի ռուսերենից: Գնում էինք նեղիկ փողոցներով, որոնց լայնությունը երբեմն հասնում էր երկու-երեք մետրի: Մտնում էինք խանութները, ավելի ճիշտ՝ խանութիկները, ուր եթե միաժամանակ երեք-չորս մարդ մտնեք, շարժվելու տեղ չէր լինի:

Եվ ահա մի քանի մետր քայլելով այդպիսի շրջակայքում, որտեղ ամեն ինչ կամերային էր, ամեն ինչ մոտիկ, և չկար ոչ մի հեռապատկեր ու տարածություն, տներից մեկի նեղ կամարի միջով մենք

հանկարծ անգսպելիորեն դուրս եկանք Սուրբ Մարկոսի հրապարակը: Ես չվրիպեցի՝ գրելով *հանկարծ* բառը: Թեև գիտեինք, թե ուր էինք գնում և քայլում էինք հենց դեպի հրապարակ, այդուհանդերձ այն իր ողջ վեհությամբ մեր առջև հայտնվեց իսկապես որ հանկարծ, անսպասելի, անակնկալ: Վիթխարի էր այն՝ շրջապատված մեծ ու բարձր տուն-պալատներով, որոնք, մինչ այդ իմ տեսած մյուս տների համեմատ, երկնաքերներ թվացին ինձ: Այդ ամենը նույնչափ անսպասելի էր, որչափ պայթյունն է անսպասելի լինում: Դա իսկապես պայթյուն էր տարածության, պայթյուն, եթե կարելի է նման բառակապակցություն գործածել:

Եվ հենց այնտեղ՝ Սուրբ Մարկոսի հրապարակում, ես ակամա հիշեցի Մինասին և նրա նկարներից ստացած տպավորությունն: Եվ հասկացա, թե ինչ էր կատարվել ինձ հետ: Եվ վերջապես գտա այն բառերը, որոնք կարող էին բացատրել կատարվածը: Իսկ ինչ էր կատարվել: Այնտեղ արվեստանոցում նույնպես պայթյուն էր եղել, գույնի պայթյուն:

16. Հետևյալ տեքստը թարգմանել ռուսերեն և անգլերեն, վերլուծել նախադասությունները, գտնել գլխավոր և երկրորդական անդամները. բացատրել կապակցման եղանակների առանձնահատկությունները:

Երեք ընկեր անտառի միջով միասին ճանապարհ էին գնում: Դրանից մի քանի օր առաջ այնտեղ զարհուրելի փոթորիկը կոտրատել և արմատախիլ էր արել բազմաթիվ ծառեր: Հենց նույն ճանապարհի վրա մի քանի հսկա կաղնիներ էին ընկած: Բայց նրանցից ոչ հեռու, միմյանց մոտ կանգնած էին երկու փոքրիկ ծառեր:

Ընկերներին սաստիկ զարմացրեց այն, որ փոթորիկն այդքան մեծամեծ ծառեր տապալելուց հետո այդ երկուսին անվնաս էր թողել:

-Մոտ գնանք և տեսնենք՝ որն է դրա գաղտնիքը,- ասաց ընկերներից մեկը:

Մոտեցան և սկսեցին նայել: Այստեղ միայն նկատեցին, որ այդ փոթորիկ ծառերի արմատներն այնպես պինդ էին հյուսվել, որ ոչ մի փոթորիկ չէր կարող խորտակել:

-Տեսնու՞մ ես,-ասաց մյուսը,-թե որքան մեծ նշանակություն ունի մտերմությունն ու բարեկամությունը:

Միայնակ մարդը, որքան էլ ուժեղ լինի, շուտ կընկճվի դժբախտության առաջ: Իսկ այն մարդը, որ ունի հավատարիմ ընկեր ու բարեկամ, շատ թշվառությունների կղիմադրի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Հայ լեզվաբանության պատմություն, հ.հ. 1-2, Ե., 1958-1962:
2. Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
3. Աղայան Էդ., Արդի հայեչենի առձեռն բացատրական բառարան, Ե., 2014:
4. Աճառյան Հր., Արմատական բառարան (վերհր.), 4^Ճ., Եր., 1971:
5. Գևորգյան Ե., Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Եր., 1978:
6. Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
7. Խաչատրյան Լ., Հետաքրքրաշարժ լեզվաբանություն, Ե., 2008:
8. Խաչատրյան Լ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:
9. Խաչատրյան Լ., Միրումյան Մ., Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան, Ե., 2020:
10. Խաչատրյան Լ., Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Ե., 2021:
11. Ղազարյան Հ. Ս., Լեզվաբանական տերմինների համառոտ բառարան, Ե., 2004:
12. Ղազարյան Հ. Ս., Լեզվաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ, Ստ., 2006:
13. Պետրոսյան Հ. Զ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Ե., 1975:
14. Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:
15. Զահուկյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, հ. 1-2, Ե., 1960-1962:
16. Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

17. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:

18. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն, Ե., 1987:

19. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (վերհրատ

20. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:

1. Матвеева Т.В., Полный словарь лингвистических терминов, Ростов- на-Дону, 2010.

2. Ахманова О. С., Словарь лингвистических терминов, М., 1969.

3. Джаукян Г. Б., Общее и армянское языкознание, Е., 1978:

4. Кодухов В. И. Общее языкознание, М., 2013.

5. Маслова В. А., Современные направления в лингвистике, М., 2008.

6. Матвеева Т.В., Полный словарь лингвистических терминов, Ростов- на-Дону, 2010.

7. Степанов Ю. С., Основы общего языкознания, М., 1975:

8. Широков О. С., Введение в языкознание, М., 1985:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ-ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ
ՀԹ-ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԱՎ-ԱՇՈՏ ԱՎԴԱԼՅԱՆ
ՀՇ-ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ
ԱՂ-ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ
ՆԴ-ՆԱՐ-ԴՈՍ
ԳԳՄ-ԳԱԲՐԻԵԼ ԳԱՐՍԻԱ ՄԱՐԿԵՍ
ՆԶ-ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ
ԴԴ-ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ
ՊՍ-ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
ԵԶ-ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ
ՍԿ-ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
ԹԶ-Թ. ԶՈՒՐԱԲՅԱՆ
ՎԱ-ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ
ԼՀ-ԼԼՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎՊ-ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՍ-ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ
Բ-ԲԱՏՅԻ

ԱԱ – АННА АХМАТОВА

ԱՍ- АЛЕКСАНДР ПУШКИН

ԱԿ – АНТОН ЧЕХОВ

ՎՕ- ВЛАДИМИР ОБРУЧЕВ

ԵԵ – ЕВГЕНИЙ ЕВТУШЕНКО

ԿՍ – КОНСТАНТИН ПАУСТОВСКИЙ

ԼԿ—ЛЕВ КАСИЛЬ

ԼՏ- ЛЕВ ТОЛСТОЙ

ՄԴ- МАКСИМ ГОРЬКИЙ

ՄԼ – МИХАИЛ ЛЕРМИОНОВ

ЭА- ЭДУАРД АСАДОВ
СВ - СЕРГЕЙ ВОРОНИН

BT –Brian Turner
RB-Robert Burns
EP –Edgar Alan Poe
WSM-William Somerset
HL-Henry Wadsworth

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանության պատմություն-----	3
Լեզվաբանությունը գիտությունների համակարգում-----	5
Լեզվի բնութագրերը: Լեզվի բնորոշումը: Լեզու և մտածողություն-----	6
Լեզուների տիպերն ըստ գործածության-----	8
Լեզվի գոյության ձևերը: Լեզվի տարբերակները: Լեզու, խոսք, նորմ, կառուցվածք-----	9
Լեզվաբանական մեթոդներ-----	17
Լեզվի ծագումը և զարգացումը-----	31
Աշխարհի լեզուների դասակարգումը-----	32
Լեզվական մակարդակներ և միավորներ-----	33
Հնչյունաբանություն: Ա.Հնչյունախոսություն-----	40
Բ.Հնչյութաբանություն -----	52
Գ.Հնչյունափոխություն -----	62
Ձև և ձևույթ: Բառի ձևաբանական կազմը-----	77
Բառագիտություն. Ա. Բառակազմություն	
Ա. Բառակազմություն Լեզվական կաղապարներ-----	87
Բ.Իմաստաբանություն և իմաստափոխություն-----	103
Գ. Բառապաշար-----	121
Դարձվածաբանություն-----	131
Քերականություն:Քերականական իմաստ և ձև:	
Քերականական արտահայտության միջոցներ:	
Քերականական կարգեր-----	136
Խոսքի մասեր-----	152
Շարահյուսություն: Բառակապակցություն և նախադասություն-----	159

ՀԱՄԱՐԻՆ ԴԱՁԱՐՑԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Լ. Մարգարյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Մովսիսյան

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Արևշատյանի

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՄ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025